# Ազգ
Azg

7-13 ՓԵՏՐՎԱՐ 2025 ՈՒՐԲԱԹ 004(5829)

ISSN: 1829-1651

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ


## Մյունխեն գնալիս հիշենք Բաքվի բանտում մեր ռազմագերիներին

Փետրվարի 14-16-ին Մյունխենում գումարվելու է անվտանգության 61-րդ համաժողովը՝ բանավեճի բացառիկ մի հարթակ՝ արտաքին եւ անվտանգության քաղաքականության, արդի մարտահրավերների վերաբերյալ: Այս տարի ժամանակն էլ հետաքրքրական է՝ սպասում են ԱՄՆ նորանշանակ փոխնախագահի Վենսի եւ պետքարտուղար Ռուբիոյի հետ հանդիպմանը:

Բրյուսելում նոր է սկսվել օրենսդրական շրջանը, իսկ համաժողովի ավարտից մեկ շաբաթ անց ԳԴՀ-ում Բունդեսթագի ընտրություններ են: 60 պետության ղեկավար եւ վարչապետ, 150 նախարար, նրանց թվում Չինաստանի գլխավոր դիվանագետը, Զելենսկին եւ ուրիշներ Մյունխեն կժամանեն:

⇨3

## Վտանգավոր քաղաքական տուրբուլենտություն

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ովքեր դիտում էին **Նիկոլ Փաշինյանի** վերջին ասուլիսը սոցիալական ցանցի նրա էջում՝ տեսել են, թե բացասական արձագանքների ինչ տարափ էր տեղում մեկնաբանությունների բաժնում, ու թեեւ դրանք նույն վայրկյանին ջնջվում էին, սակայն ակնդետ հետեւողի համար միայն այդ մեկնաբանություններից էլ պարզ էր, թե ո՞ր աստիճանի ցածր է Փաշինյանի ու նրա իշխանության վարկանիշն այս պահին: Նկատի չունենք ո՛չ ընդդիմախոս, եւ ո՛չ իշխանամետ ֆեյքերի մեկնաբանությունները, որոնց տարբերակելը շատ հեշտ է, այլ իրոք հանրության լայն շերտերը ներկայացնող օգտատերերի:




Այսինքն՝ իշխանությունը հիմա առավել, քան երբեւէ ամենացածր վարկանիշն ունի, ու այդ վարկանիշով փորձում է իրականացնել հակասոցիալական բնույթի (կամ այդպես ընկալվող) մի շարք նախաձեռնություններ՝ համընդհանուր հայտարարագրում, շրջանառության հարկի տոկոսադրույքի բարձրացում, տրանսպորտի թանկացում, աղբահանության վարձավճարի գանձման անտրամաբանական տարբերակ, գույքահարկը տարեցտարի թանկացնող՝ նախկինում ընդունված օրենքի չկասեցում եւ այլն:

⇨3

ՕՐԵՐԻ ՀԵՏ

## Ո՞վ եւ ովքե՞ր են օգտվում «քաղաքավարության» վնասներից

Ընդամենը տաս օրում (հունվարի 24-փետրվարի 4) **Նիկոլ Փաշինյանը** պաշտոնապես երկու հանդիպում ունեցավ սփյուռքահայերի հետ. առաջինը Ցյուրիխում, երկրորդը՝ Վաշինգտոնում: Առաջինը դավոսյան, երկրորդը՝ ինչ-որ կրոնաեկեղեցական ֆորումի շրջանակում, ինչպես արձանագրվեց պաշտոնական հաղորդագրություններում: Առաջինի մասին գրել ենք արդեն, երկրորդի մասին՝ գրվում եւ խոսվում է այս օրերին, հատկապես սոցցանցերում, ուր, ինչպես միշտ, ուշադրությունները առավելապես կենտրոնացած են երկրորդական բաների վրա, ինչպես՝ տիկին **Աննա Հակոբյանի** ծննդյան տարեդարձի եւ, վարչապետին նույնպես ուղեկցած, Հայաստանում քովիդ 19-ի դեմ պայքարը տապալած, իրեն կրոնակեղեցական հարցերի մե՜ծ մասնագետ համարող **Արսեն Թորոսյանի** վրա: Առավել լուրջ՝ շատ են մեկնաբանությունները, չարախնդության երանգներով, թե, իբր, Ն. Փաշինյանը Մ. Նահանգների մայրաքաղաք էր գնացել Սպիտակ տան ուշադրությունը գրավելու եւ միգուցե ներս հրավիրվելու ակնկալությամբ:

Չբացառելով որեւէ վարկած ու ենթադրություն, հիմնվելով պաշտոնական լրահոսի վրա, կարող ենք պնդել, որ Վաշինգտոնում, ինչպես Շվեցարիայում, Փաշինյանը չի ունեցել միջազգային կամ միջպետական որեւէ հանդիպում, առավել եւս՝ բանակցություն: Ուրեմն, հարցը ծագում է ինքնաբերաբար. ինչո՞ւ այդ ուղեւորությունները, ի՞նչ անելու համար, ի՞նչ նպատակով:

Մնում է մեկ եւ միակ պատասխան՝ խոսելու սփյուռքահայերի հետ, գեթ նրանց ընտրովի որոշ անդամների հետ: Ինչի՞ մասին՝ Ցեղասպանության, այսինքն՝ այն հարցի, որի ծնունդն ու հետեւանքակիրն է Հայկական սփյուռքն իր մեծամասնությամբ: Ի՞նչ պատգամ փոխանցելու համար՝ ի՞նչ, ինչո՞ւ եւ ի՞նչպես է պատահել Ցեղասպանությունը, ո՞վ է դրդել, ո՞րն էր դրա նպատակը, ո՞րն է մեր «հանցանքը», ի՞նչ վտանգ է այն ներկայացնում Հայկական Պետության համար:

Եթե Ն. Փաշինյանն այդ հանդիպումներում բարձրացներ, ասենք, Հայաստանում ներդրումներ անելու, արտադրական կարողությունները մեծացնելու, կամ նոր տեխնոլոգիաներ բերելու՝ յուրաքանչյուր հայրենասեր հայի պարտականության մասին, ապահովաբար բոլորս ծափահարելու էինք նրան: Բայց ո՛չ: Ն. Փաշինյանը փաստորեն եւ կասկածելի հետեւողականությամբ հարցականի տակ էր դնում Ցեղասպանության իրողությունը եւ, նույնիսկ, հանցանքը գցում ցեղասպանվածների եւ, ենթադրաբար, օտար ուժերի վրա: Այլ խոսքով՝ նա ուրանում, ժխտում, հերքում է փաստը: Ավելին՝ մեղադրում է հայերիս, այդ թվում՝ իր հետ հանդիպումներին ներկայացածների ծնողներին, նախնիներին:

Առավել տարօրինակն այն է, որ ներկաներից ոչ ոք տեղում չպատասխանեց նրան, ըմբերանիչ ելույթ չունեցավ, անգամ չլքեց դահլիճը: Չզգացի՞ն, չանդրադարձա՞ն, որ «հայրենի հյուրի» խոսքը հորդոր էր, հար եւ նման Էրդողանի քանիցս կրկնած հորդորին՝ **ՉՀԻՇԵԼ**:

Ավելին: Վաշինգտոնյան հանդիպման ընթացքում, ինչպես տեղեկացնում է MediaMax-ը, Ն. Փաշինյանը զարգացրել է բոլորովին նոր տեսություն, իր բառով՝ գաղափարախոսություն, որը, իր կարծիքով, «եթե շատ ավելի վաղ որդեգրած լինեինք, գուցե ավելի մեծ երաշխիքներ կունենայինք, որը կպահովեր Հայաստանի լինելիությունը»: Ո՞րն է այդ չնաշխարհիկ գաղափարը: «Պարտության միջով անցելով՝ ձեռք ենք բերել անկախ եւ ինքնիշխան պետություն ունենալու հնարավորություն»: Ուրեմն, ավելացնենք մեր կողմից, կեցցե՛ պարտությունը, կեցցե՛ մեզ պարտության մատնած գերագույն եւ գլխավոր հրամանատարը: Սա հե՛նց այն գաղափարախոսությունն է, որը, մյուս կողմից, ձայնակցելով Թուրքիայի իր ավագ եղբորը, փայփայում է Իլհամ Ալիեւը, խոստանալով նոր պարտություններ պարգեւել մեզ ու դրանով ուժեղացնել մեր պետությունը...

***

Վաշինգտոնյան հանդիպմանը ներկա իմ ծանոթներից մեկին երբ հարց տվեցի, թե ինչո՞ւ մասնակցեց, շա՜տ անկեղծ պատասխանեց. «Ի՞նչ ընեի, հրավիրված էի, անքաղաքավարություն պիտի ըլլար, եթե ներկա չգտնվեի»: Ստիպված՝ խորհուրդ տվեցի նրան վերստին կարդալ անմահանուն մեր երգիծաբանի՝ Հ. Պարոնյանի «Քաղաքավարության վնասները» շարքը: Միայն թե, ավելացրեցի, այս պարագայում վնասը անձնական չէ, այլ՝ համահայկակա՛ն, համապետակա՛ն:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

## Դում-Թրագութ. «Իհարկե շատ կարեւոր է, որ Առաքելոցը սահմանամերձ գյուղում է գտնվում»

**- Տիկին Դում-Թրագութ, անցյալ շաբաթ ֆբ սոցցանցում հրապարակեցիք հետեւյալ լուրը՝ «Առաքելոց վանական համալիրը եւ գյուղատեղին ընդգրկվել են Եվրոպայի 14 ամենավտանգված ժառանգության վայրերի կարճ ցանկում»: Սա ձեր ջանքերի շնորհիվ է: Հիշյալ նորությունը տեղ գտավ նաեւ հայաստանյան ԶԼՄ-ներում: Եթե չեմ սխալվում, Եվրոպական ներդրումային բանկն է ֆինանսավորում նորոգումը:**

- Ճիշտ է: Անցած գարնանը ՀՀ ԳԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի իմ ղեկավարած «Հայ մշակութային ժառանգության միջգիտակարգային ուսումնասիրություններ» լաբորատորիան հետազոտում էր Առաքելոց վանական համալիրը եւ բնակատեղին: Շատ տպավորված էի՝ վանական համալիրի հետաքրքրական դիրքը եւ բնակատեղին՝ պահպանված զանազան շենքերը, խաչքարերը, գերեզմանատները հուշեցին գաղափարը: Որպես «Եվրոպա Նոստրայի» ավստրիացի անդամ որոշեցի Առաքելոց վանական համալիրը եւ գյուղատեղին առաջարկել՝ որպես հուշարձանախումբ:

**-Ինչպե՞ս է ընտրվել Առաքելոցը, հաշվի է առնվել մշակութայի՞ն արժեքը, թե՞ վտանգվածության աստիճանը: Կռահելի է, որ Ադրբեջանին սահմանամերձ Տավուշի Առաքելոց վանական համալիրը պատմական եւ աշխարհաքաղաքական կարեւորություն ունի:**

- Ընտրվելու տարբեր պատճառներ կան: Ինչպես շեշտել եմ իմ դիմումի մեջ, եւ որը մեջբերված է «Եվրոպա նոստրայի» մամլո հաղորդագրությունում, «Առաքելոցն այսօր առերեսվում է ամենուր սպրդող բուսականության, քայքայվող հիմնապատերի, փոփոխվող կլիմայի, առաստաղների ու սելավների վտանգներին. սեյսմիկ ակտիվ գոտում գտնվելու հանգամանքն ու երկրաշարժերից վնասված շինությունները հավելյալ մարտահրավերներ են հուշարձանախմբի համար: Մարդկային գործոնը եւս տեսանելի է՝ գրաֆիտի, հանգստի երկու ընդարձակ գոտի, չպահպանվող տարածք: Ավելին՝ չղջիկների գաղութը համալիրի տարածքում մշակութային ժառանգության ու վայրի բնության պահպանության միջեւ հավասարակշռված ընտրություն է ենթադրում»: Իհարկե շատ կարեւոր է, որ հուշարձանախումբը սահմանամերձ գյուղում է գտնվում: Անցյալ տարի Տավուշի հենց այդ տարածքն ինչքան շատ է մեդիայի ուշադրությանն արժանացել:

**- Այս՝ 7 ամենավտանգված հուշարձաններ ծրագրով 10 տարվա ընթացքում ընտրվել է 31 երկրի 56 հուշարձան: Հայաստանից ուրիշ հուշարձան երբեւէ եղե՞լ է «Եվրոպա Նոստրայի» այս ծրագրում:**

- Անշուշ եղել են: Առաքելոցը ներառյալ՝ 7-ն ընդգրկվել են. 2013-ին՝ Արագածոտնի սուրբ Պողոս Պետրոս եկեղեցին, 2014-ին՝ Դսեղի Բարձրաքաշ սուրբ Գրիգորի վանքը, 2016-ին՝ Երերույքի հնավայրը եւ Անիպեմզա գյուղը, 2019-ին՝ կարասը՝ հայ ավանդական գինեգործական մշակույթի պաշտպանությունը, Տավուշի Խորանաշատ վանքը, 2024-ին էլ Ամբերդն է կարճ ցանկում հայտնվել: Բայց միայն 9 տարի առաջ 2016 թվականին Երերույքն է ընտրվել՝ որպես այդ տարվա 7 ամենավտանգված հնավայր:

⇨6

# Սիրիայի առաջնորդի այցը Ռիադ եւ Անկարա

**ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ**

Իրանագէտ

Սիրիայի ժամանակավոր կառավարության ղեկավար «Հայաթ Թահրիր աշ-Շամ» շարժման առաջնորդ **Ահմադ աշ-Շարաան** իր պաշտոնն ստանձնելուց հետո, որպես առաջին արտասահմանյան այց, ընտրեց Սաուդյան Արաբիան, ըստ երեւույթին՝ շուրջ 14 տարի տեւած Սիրիայի քաղաքացիական պատերազմի հետեւանքները վերացնելու հարցում Ռիադի աջակցությունն ստանալու ակնկալիքով: Սակայն Սաուդյան Արաբիայի գահաժառանգ **Բին Սալմանի** հետ բանակցություններից հետո, ֆինանսական աջակցության կամ Սիրիայում ակնկալվող հսկայածավալ ներդրումների մասին ոչինչ չասվեց:

Շարաայի երկրորդ կանգառը Թուրքիան էր, որն իրականացվեց **Էրդողանի** աջակցությունը վայելող բարձրաստիճան հյուրին Անկարայից Դամասկոս ուղարկված հատուկ ինքնաթիռի միջոցով: Դա Սիրիայի արտաքին քաղաքականության մեջ Թուրքիայի բացառիկ դերի վկայությունն էր:

Կար նաեւ տեսակետ, որ օսմանյան տիրակալների հաղթական այցելությունների օրինակով, Էրդողանն ինքն էր ցանկանում առաջինը այցելել Դամասկոս: Սակայն, անվտանգային նկատառումներից ելնելով, կամ էլ քրդական հարցի պատճառով Իրանի զգայունությունը հաշվի առնելով, Թուրքիայի նախագահը գերադասեց առաջնահերթությունը տալ Շարաայի այցին՝ պատասխան այցը թողնելով մոտ ապագային:



Շարաան մինչեւ Ռիադ եւ Անկարա այցելելը, իր ղեկավարած երկրի առաջնահերթություններում նաեւ Իրանի տեղը հստակեցնելու նպատակով, Սիրիայի հեռուստատեսությանը տված հարցազրույցի ժամանակ հայտարարել է, որ նախկինում Սիրիայի ողջ տարածքում ազատ գործունեություն ծավալող Իրանի աշխարհազորայինները սպառնալիք էին ո՛չ միայն Սիրիայի, այլ նաեւ ողջ տարածաշրջանի համար:

**Ասադի** վարչակարգը տապալած Ահմադ աշ-Շարաան իր նախկին ելույթներում ավելի զգուշավոր էր օգտագործում «Իրան-Սիրիա հարաբերություններ» բառակապակցությունը՝ աշխատելով տպավորություն թողնել, որ Թուրքիայից բացի, Դամասկոսը մտադիր է նաեւ վերաիմաստավորել հարաբերությունները Իրանի հետ: Այսօր Սիրիայի ղեկավարի մոտ աստիճանաբար փոփոխության է ենթարկվում Դամասկոս-Թեհրան հարաբերությունների մասին հնչող հռետորաբանությունը:

Անկարայից ոչ հեռու՝ Բեշթեփիե պալատում փակ դռների ետեւում կայացած Էրդողան-Շարաա հանդիպումից հետո, մամուլի ասուլիսի ժամանակ, Թուրքիայի նախագահը հայտարարեց «քուրդ եւ դաիշական ահաբեկիչների» դեմ պայքարի հարցում Սիրիային աջակցելու վերաբերյալ իր գործընկերոջը տված հավաստիացումների մասին:

Էրդողանը նաեւ խոսել է Սիրիայի հյուսիս-արեւելյան շրջաններում տեղակայված անջատողականների եւ նրանց հովանավորող ուժերի դեմ պայքար մղելու համատեղ ջանքերի շուրջ Շարաայի հետ ձեռք բերված պայմանավորվածությունների մասին:

Թեեւ համատեղ մամուլի ասուլիսի ժամանակ անդրադարձ չի եղել Թուրքիայի ու Սիրիայի միջեւ պաշտպանական ոլորտում ձեռք բերված պայմանավորվածություններին, սակայն «Ռոյթերզ» գործակալությունը, վկայակոչելով իր հավաստի աղբյուրները, նշում է, որ բանակցող կողմերը փակ դռների ետեւում քննարկել են նաեւ պաշտպանական ոլորտում համագործակցելու, այդ թվում՝ Սիրիայի տարածքում օդային ռազմական հենակետեր ստեղծելու եւ Սիրիայի նոր բանակի կազմավորման հարցում ցուցաբերվելիք օժանդակության մասին:

Ըստ նույն աղբյուրի՝ այդ պայմանավորվածությունը կարող է վերաբերել նաեւ Սիրիայի կենտրոնական շրջանում՝ Բադիա անապատում թուրքական երկու ռազմահենակետ ստեղծելու խնդրին:

Սիրիայում ձեւավորվող նոր քաղաքական միջավայրում Թեհրանն ու Անկարան կարող են իրենց պայքարը շարունակել կա՛մ իրաքյան մրցադաշտում, կա՛մ էլ Սիրիան դարձնել համագործակցության նոր ասպարեզ:

Նկատի ունենալով տարածաշրջանային զարգացումներն ու քաղաքական վերադասավորումների ներկայիս անորոշությունը՝ առաջին այլընտրանքի հավանականությունն ավել է մեծ է թվում:

# Իսկ աշխարհի շատ քաղաքներում հասարակական տրանսպորտն անվճար է

**ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ**

Քաղաքային տրանսպորտի աշխատանքի եւ ուղեւորների սպասարկման որակի բարելավման խնդիրը նոր չէ, որ օրակարգային է ինչպես մեր մայրաքաղաք Երեւանի, այնպես էլ հանրապետության այլ քաղաքների համար: Այդ ուղղությամբ վերջին շրջանում մայրաքաղաքում կատարվող քայլերից են նախկին գազելների փոխարեն մեծ թվով նոր ավտոբուսների ներկրումն ու երթուղիներում գործարկումը, մեկ էլ տոմսային նոր համակարգի ներդրման ու հընթացս նաեւ ուղեւորավարձի թանկացման փորձը: Որը գիտենք, թե հիմա ուր է հասել:

Դեռ ուղեվարձը եռապատկելու՝ 300 դրամ դարձնելու հաշվարկ ներկայացնելիս **Տիգրան Ավինյանի** ղեկավարած քաղաքային իշխանությունը հավաստիացնում էր, որ դա անհրաժեշտ է համակարգի նաեւ հետագա կայուն աշխատանքի ապահովման համար: Իսկ վարչապետ **Փաշինյանն** էլ ասում էր՝ վերջին քսան տարում ուղեվարձը 100 դրամից չի թանկացել, հո չի կարող անվերջ այդքան մնալ: Իսկ գիտե՞ք, դրանից քսան տարի առաջ էլ այդ ուղեվարձը 3-5 կոպեկ էր ու երբեք էլ չէր թանկանում: Ճիշտ է՝ դա այլ կարգեր, այլ իրականություն էր: Բայց եւ ներեցեք, թեկուզ հիմա ո՞վ է ասում, որ պետք է ամեն ինչը տարեցտարի անպայման թանկանա, թեկուզ հիմա էլ 100 դրամը դառնա 150 ու երբեւէ չլինեն նաեւ հակառակ դեպքեր:

Մինչդեռ աշխարհի տարբեր քաղաքներում այսօր որոշակի տարածում գտած միտում է անգամ անվճար քաղաքային տրանսպորտը: Իհարկե՝ ուղեւորների՛ համար անվճար, որովհետեւ համակարգը պահելու եւ աշխատեցնելու համար անհրաժեշտ գումարներն ինչ-որ տեղից, նաեւ համայնքային բյուջեներից փոխհատուցվում են: «**Ազգը**» ժամանակին անդրադարձել է այս իրողությանը, բերվել է օրինակ՝ հետխորհրդային տարածքում առաջինը դեռ 2013 թվականին դրան անցած Էստոնիայի մայրաքաղաք Տալլինի հաջող փորձը, որը հետո ներառել է այդ երկրի նաեւ այլ տարածքներ ու երթուղիներ: Ամբողջությամբ անվճար հասարակական տրանսպորտ առաջին անգամ մտցվել է ինչ-որ տեղ ԱՄՆ-ում դեռ 1970-ական թվականներին: Լյուքսեմբուրգում 2020 թվականից ամբողջ երկրում անվճար են դարձել հասարակական տրանսպորտի բոլոր տեսակները, ներառյալ նաեւ երկաթուղու գնացքները՝ հատուկ բացառություններով: Վերջին տարիներին անվճար տրանսպորտի ներդրման օրինակներ ու փորձեր կարելի է նշել Ֆրանսիայի 30 քաղաքներից, Ավստրալիայից, Շվեյցարիայից, Չինաստանից, Բելգիայից, Մալթայից, Դանիայի կղզիներից. դա հասունացած խնդիր է համարվել նաեւ Ռուսաստանում:

Սոցիալական ընդունված կարեւոր միջոց լինելուց զատ, անվճար համակարգի ներդրումը կարող է ծառայել նաեւ ծախսատար անհատական մեքենաներով երթեւեկող վարորդների եւ ուղեւորների մի մասի հաշվին դեպի հասարակական տրանսպորտ ուղեւորահոսքի ավելացմանն ու ծանրաբեռնված փողոցների բեռնաթափմանը, վառելիքային արտանետումների եւ օդի աղտոտվածության նվազեցմանը, ավտովթարների քանակի, խցանումների, մարդկանց ժամանակի կորուստների կրճատմանը եւ այլն: Իհարկե, տրանսպորտը միայն անվճար դարձնելը, եթե անգամ լուծվեն ֆինանսավորման ապահովման խնդիրները, բավարար չէ նշված նպատակներին հասնելու համար: Դա համալիր խնդիր է, որը պահանջում է նաեւ այդ տրանսպորտի հուսալիությունը, հարմարավետությունն ու անվտանգությունը, երթեւեկության հաճախականությունը, ճշտապահությունը, սպասարկման տարածքը, արագությունն ու երթուղու հարմարությունը:

Կարծում ենք՝ եթե մենք քաղաքային մշակույթի այս նոր տարրի ներդրմանը դեռ պատրաստ էլ չենք, եղած փորձն արժե ուսումնասիրել եւ քայլ առ քայլ մոտենալ դրա տարբերակների ներդրումը մեր պայմաններում հնարավոր դարձնելուն:

Մի բան էլ՝ տրանսպորտի ուղեվարձի վճարման ներդրվող համակարգի մասին:

Երբեմն մի տեսակ տպավորություն է ստեղծվում, որ այն հիմնականում ամեն օր երթեւեկող միայն մայրաքաղաքցի ուղեւորի համար է: Բայց մայրաքաղաքը նաեւ բոլորիս հարազատ ու մեր երբեմնակի այցելությունների քաղաքն է, ավելացրած նաեւ դրսեկ հյուրերի մշտապես առկա որոշակի քանակը: Քաղաքային տրանսպորտով նման ուղեւորների տեղաշարժը եւս չպետք է բարդացվի: Եվ ընդհանրապես թվում է՝ արվել է ամեն ինչ՝ այս հարցում էլ մարդկանց կյանքը դժվարացնելու համար: Վճարման նոր եղանակները չպետք է սահմանափակեն դրանցից իր համար առավել հեշտն ընտրելու ուղեւորի իրավունքը: Պահպանենք նաեւ առաջվա պես ուղղակի դրամով վճարելու հնարավորությունը: Եթե ասում եք՝ կոռուպցիա է, ինչ է՝ դա թույլ չտալը, հարգելի պաշտոնյաներ, ձե՛ր անելիքն է:

# Հսկա հողմատուրբին Չինաստանում

Չինաստանը աշխարհի անվիճելի առաջատարն է հողմային էներգիայի ոլորտում, սահմանել է եւս մեկ ռեկորդ՝ ամենաբարձր եւ հզոր ծովային հողմատուրբինի համար՝ ավելի բարձր, քան Էյֆելյան աշտարակը: Նշվում է, որ Dongfang Electric Corporation-ը (DEC) կառուցում է հսկայական 340 մետրանոց հողմատուրբին՝ 26 ՄՎտ հզորությամբ Ֆուցզյան նահանգի Ֆուչժոու քաղաքում գտնվող իր ձեռնարկությունում: Հողմատուրբինը գտնվում է 185 մետր բարձրության վրա, իսկ դրա շեղբերների տրամագիծը ահռելի է եւ հասնում է 310 մետրի:



Մաքրված տարածքը հասնում է գրեթե 75,5 հազար քառակուսի մետրի, որն իր չափերով համեմատելի է մոտ տասը ֆուտբոլի դաշտերի հետ:

Չնայած իրենց տպավորիչ չափերին, հողմային տուրբինները դիմացկուն են թայֆունին եւ կոռոզիային: Մասնավորապես, դա թույլ է տալիս քամու գեներատորին դիմակայել մինչեւ 220 կմ/ժ արագությամբ քամիներով թայֆունին:

Հսկա գեներատորը տարեկան կարտադրի 100 ԳՎտժ էլեկտրաէներգիա: Այսպիսով, այս մեկ գեներատորը կկարողանա էլեկտրաէներգիա ապահովել չինական 55 հազար տնային տնտեսությունների:

**ՍՏԵՓԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ**
**Հայկական էներգետիկական ակադեմիայի հիմնադիր նախագահ**

# Վտանգավոր քաղաքական տուրբուլենտություն

⇨1 Եթե պատերազմն ու պարտությունը չլինեին, այս բոլորն կիրականացվեր իշխանության բարձր վարկանիշի պարագայում, միգուցե եւ հանրության հակազդեցությունն այս բոլորին այդքան ցայտուն չլիներ:

Մինչդեռ հանրությունը զանգվածաբար դժգոհ է իշխանության որակումով` այս բարեփոխումներից, ժողովրդի որակումով` մարդկանց գրպանը մտնող, սոցիալական վիճակը վատթարացնող որոշումներից եւ օրենքներից:

Սակայն զարմանալին այն է, որ իշխանության ներսում այս վերաբերմամբ հետեւություններ չեն հանգում, տրանսպորտի 150 դրամանոց սակագինը վկա:

Նրանք, ինչպես եւ բոլոր նախորդ իշխանությունները, օտարվել են հանրության լայն շերտերից, փակվել են իրենց կողմնակիցների, բարձր աշխատավարձ ստացող պաշտոնյաների, սեփական շքեղ մեքենաներով շրջողների (հա, ի՞նչ եղավ շքեղության հարկը) կապարում եւ չեն ստանում այն իրական ազդակները, որ կան հանրության մեջ: Մանավանդ, որ հաստիքով փիարշիկները քանի չեն խնայում` վարչապետի եւ իշխանության տեսադաշտից հեռու պահելու մարդկանց իրական տրամադրությունները եւ ջերմոցային պայմաններ ապահովելու իշխանության համար:

Մինչդեռ իրականությունն այն է, որ հանրության լայն շերտերն իրենց օտարված են զգում իշխանությունից էլ, ընդդիմությունից էլ, չնայած վերջինիս տարբեր թեւերին թվում է, որ եթե հանրությունն իշխանությունից դժգոհ է, ուրեմն ավտոմատ իր կողմնակիցն է: Իհարկե ոչ, ընդդիմությունը եւս, ինչպես իշխանությունը, հանրության լայն շերտերի վրա ազդեցություն լայն առումով չունի, եւ հենց այդ պատճառով առիթից առիթ դժգոհությունը գեներացնելու ընդդիմության տարբեր թեւերի ախորժակը հազիվ թե մեծ սնունդ ստանա: Պատճառները տարբեր են` նախ որ տարբեր ընդդիմադիր շրջանակներ ու գործիչներ, անցյալի կնիքը կրելով, լիովին արժեզրկված են, չնայած անձամբ իրենք դա կամ չեն զգում, կամ իմանալով դա` համառում ու պնդաճակատություն են անում, իրենք եւս սեփական կողմնակիցների ու սեփական լրատվամիջոցների ամենօրյա փառաբանության ջերմոցային պայմաններում գտնվելով եւ էլի կտրվելով իրականությունից: Ավելին, նրանք չեն զլանում բոլորից դժգոհ հայ մարդուն տարբեր որակումներ տալ` իբր իրենք, ու միայն իրենք են գիտակից, հայրենասեր, ազգասեր, հայրենիք փրկող, իսկ զանգվածներն այնքան անկիրթ ու փոքր գերի են, այնքան զոմբի ու ժեխ են, որ նրանց պատճառով հայրենիք փրկելու իրենց սուրբ գործը չի ստացվում: Ու անգամ վիրավորում են այն հատուկենտ մարդկանց, որոնք հանկարծ ու ճշմարտություն կասեն իրենց երեսին, կփորձեն նրանց մատուցել իրականությունը, իրական պատկերը դեմ կտան իրանց:

Այսինքն` իշխանությունն ու ընդդիմությունը հանրության լայն շերտերին անտեսելու, պիտակավորելու, իրենցից կիլոմետրերով հեռու պահելու համարյա թե նույն մտայնությունն են դրսեւորում: Էլ չասած, որ այս պարադիգմայից դուրս մարդկանց եւ շրջանակներին երկուսն էլ թշնամի են համարում` թույլ չտալով նոր մտայնության եւ դրանց կրողների առաջացումը:

Արդյունքում հանրության լայն շերտերը`«անգիտակիցները» , «անհայրենիքները»,«թերուսներն» ու«անկիրթները», իսկ իրականում` ժողովրդի լայն շերտերն օտարված են երկուսից էլ, երկուսին էլ հայհոյում են հավասարապես, երկուսին էլ իրենց բարեկամ չեն համարում:

Հիմա նկարագրենք, թե դա ինչ աստիճանի վտանգավոր քաղաքական տուրբուլենտ (ցնցումային) վիճակ է ստեղծում Հայաստանի համար:

Առաջին, դա կարող է խորացնել անտարբերությունն ամեն բանի նկատմամբ, այդ թվում` երկրի ամենաբախտորոշ իրադարձությունների ժամանակ համապատասխան վերաբերմունք դրսեւորելու.

Առաջիկա ընտրություններում կարող է բերել զանգվածորեն ընտրատեղամասեր չներկայանալուն:

Արտագաղթի զանգվածային դրսեւորումների (հիմա էլ այդպիսի միտում կա ըստ վիճակագրության), չնայած հայերիս հիմնական արտագաղթի երկրներում միգրացիոն քաղաքականության խստացմանը:

Կարող է նպաստել տարբեր երկրներից ուղարկված արկածախնդիրների ջրաղացին ջուր լցնելուն, տարբեր արտաքին միջամտություններին տրվելուն:

Եւ ամենավտանգավորը` իր իշխանությունից, ընդդիմությունից, քաղաքական շրջանակներից օտարված ժողովուրդը կարող է անտարբեր դառնալ արտաքին վտանգների դեմ եւ երկրի պաշտպանությունն իր գործը չհամարել:

Այլ բազմաթիվ վտանգներ կան` աշխարհաքաղաքական այս անկանխատեսելի, ամեն օր նոր իրավիճակների մոդելավորման ժամանակաշրջանում: Ո՞վ կմտածեր, որ, օրինակ, ներկա իշխանությանը կառավարման բերող եւ արտաքին դոնորներից սնվող հասարակական սեկտորը նախագահ **Թրամփի** մի որոշմամբ (Զարգացման միջազգային կազմակերպության կասեցմամբ) այս պահին կզրկվի ֆինանսավորումից, կամ հենց ամերիկյան պաշտոնյան քովիդը կանվանի կենսաբանական զենք` քովիդի գլոբալ բլեֆի միջազգային եւ մեր տեղական պ ա տ ա ս խ ա ն ա տ ո ւ ն ե ր ի ն պատժվելու հավանականությունը չբացառելով:

Դե իսկ մեզ համար քաղաքական վտանգավոր տուրբուլենտություն ստեղծողները ո՛չ ուզում են փոխվել, ո՛չ ուզում են ճանապարհ զիջել երկիրն իրապես նեղ վիճակից դուրս բերելու ուղիները տեսնող նորերի համար, ո՛չ ուզում են խորհրդարանում գծված քաղաքական քարտեզի ձեւաչափերից դուրս գալ (ասենք` ՀՅԴ-ն կարող է վայր դնել մանդատները, դուրս գալ եւ միավորել բոլոր ազգային, ձախ ուժերին, թե չէ պարզվում է` ՔՊ-ից հեռացված Հովիկ Աղազարյանն է սոցիալիստ): Մի ուրիշ թեւ կարող է առավել աջ դիրքավորված ուժերին միավորել: Ի վերջո տարբեր տեղաշարժերը հնարավոր դարձնելով` փոխել այսօրվա ամուլ դրվածքը : Բայց չէ, իշխանության համար էլ է կոմֆորտ, որ ընդդիմությունը շարունակում է բանեցնել իրեն սպառած դիմակայության ձեւաչափը: Վարչապետն էլ շարունակում է առանց կանգ առնելու, անվերջ ու անդադար, դրա կոմպետենտությունն ունենալ-չունենալով, խոսել ամեն թեմայից` մեր ցեղասպանվելու շարժառիթները հասկանալու անհրաժեշտությունից (վայ-վայ-վայ` դա հենց Հայոց ցեղասպանությունը կասկածի տակ դնելու ակտ է, եւ դա անգամ Լեմկինի ինստիտուտն արձանագրեց), պարտությունը պետություն ունենալու շանս համարելուց` մինչեւ կրոն ու պատմություն: Թե ասա` վարչապետ մարդ, ինչ գործ ունես կառավարության կրոնի տեսչության պետի մակարդակի միջոցառման` Միջազգային կրոնական ազատության 5-րդ գագաթնաժողովին մասնակցես, որ մի հատ էլ էկումենիկ առաջնորդի կասկածելի կերպարը ձգես վրադ: Էն գլխից էլ պարզ չէ՞ր, որ **Բլինքենի** հետ համագործակցության կանոնադրություն ստորագրած երկրի ղեկավարին Թրամփն ընդունողը չի, եթե դա էր գնալու թաքնված նպատակը:

Ընդդիմությունն էլ շարունակում է թունդ բառերով էս ամենը քննադատել ու խոսել իշխանափոխությունից: Բա լավ, որտե՞ղ եք տեսել առանց ժողովրդի իշխանափոխություն, կամ հո նա չի գժվե՞լ, որ ձեր ներկայացրած հներին բերի իշխանության, որքան էլ դժգոհ է ներկաներից: Իսկ հանրությունը շարունակում է օտարվել ու օտարվել` իր հոգսին գլուխը կախած, աղքատ ազգականի նվաստացուցիչ կարգավիճակում հայտնված, թանկացումների դեմ տարերային պոռթկումներով, հավասարապես բոլորին չվստահելով ու բոլորին հայհոյելով, իսկ դրա վտանգները տե՛ս վերն իմ նշած տարբերակներում:

*Հեղինակի յութուբյան հրապարակումներին հետեւեք այս հղումով.*

*https://www.youtube.com/channel/UC7a2vlmCM-LVmBF10D60LdxQ*

# Տրանսպորտի էլեկտրոնային տոմսերի նոր համակարգի բացերը եւ դրանց հետեւանքները

Երեւանի հասարակական տրանսպորտի վճարային համակարգում կատարված վերջին փոփոխությունները լայն քննարկումների եւ դժգոհությունների ալիք բարձրացրեցին:

Հունվարի 1-ից նախատեսվում էր անցում կատարել QR կոդերի եւ էլեկտրոնային տոմսերի համակարգին, որը թույլ էր տալու վճարել ինչպես QR կոդերի, այնպես էլ բանկային քարտերի միջոցով: Սակայն Երեւանի քաղաքապետ **Տիգրան Ավինյանի** եւ նախկին քաղաքապետ **Հայկ Մարությանի** միջեւ տեղի ունեցած բանավեճից հետո որոշվեց երկարաձգել այս փոփոխության իրականացումը եւս մեկ ամսով: Չնայած դրան, հունվարի մեկից դադարեց հասարակական տրանսպորտում 100 դրամանոց մետաղադրամների օգտագործումը:

Այս նոր համակարգի ներդրումը բախվեց դժգոհությունների մեծ ալիքի: Շատ քաղաքացիներ անտեղյակ էին փոփոխություններից, եւ նրանց առաջին ուղեւորությունը անվճար էր, քանի որ վարորդները, տեղյակ լինելով մարդկանց անտեղյակությանը` առաջարկում էին նրանց անվճար օգտվել տրանսպորտից: Ես ինքս ականատես եմ եղել նման դեպքերի, երբ վարորդները թույլ էին տալիս առանց վճարման երթեւեկել նրանց, ովքեր տեղյակ չէին նոր կարգերից:



Այնուամենայնիվ, նոր վճարային մեթոդների ներդրումը ստեղծեց նաեւ որոշ խնդիրներ: Առավել ակնհայտը տրանսպորտում գոյացող հերթերն են, որոնք հիմնականում ձեւավորվում են Telcell վճարային տերմինալների մոտ: Այս տերմինալները հաճախ չեն արդարացնում իրենց, եւ մարդիկ ստիպված են լինում սպասել 2-3 րոպե` վճարումը հաստատելու համար:

Հերթերի գոյացումը դանդաղեցնում է ուղեւորահոսքը, իսկ որոշ դեպքերում ուղեւորները նույնիսկ ստիպված են լինում իջնել տրանսպորտից, քանի որ չեն հասցնում վճարել ժամանակին: Ես ականատես եմ եղել դեպքի, երբ ուղեւորը դուրս է բերվել տրանսպորտից` չկարողանալով վճարել ուղեվարձը: Այս իրավիճակներում ուղեւորների եւ վարորդների միջեւ հաճախ կարող էին լսվել ուղեւորների վիրավորական արտահայտությունները, որոնք ուղղված էին թե՛ վարորդներին, թե՛ ներկայիս իշխանություններին:

Չնայած այս դժվարություններին, առցանց վճարումները ունեն նաեւ իրենց «դրական» կողմերը: Telcell Wallet հավելվածի միջոցով հնարավոր է վճարել մեկ տոմսի գին եւ երթեւեկել մի քանի անգամ, ինչը մատնանշում է համակարգի որոշակի բացթողումներ: Օրինակ` եթե վճարումն իրականացվում է էկրանանկարով` առանց ինտերնետ միացման, հնարավոր է մեկ տոմսով երթեւեկել մեկից ավելի անգամներ: Արդյոք սա ծրագրային խնդի՞ր է, հստակ պատասխան տալ չեմ կարող:

Ընդհանուր առմամբ, նոր վճարային համակարգի ներդրումը, չնայած որոշակի «դրական» կողմերին, դեռեւս պահանջում է զգալի բարելավումներ` առավել հարմարավետ դարձնելու համար հասարակական տրանսպորտից օգտվողների կյանքը:

Շատ կարեւոր է, որ քաղաքային իշխանությունները ուշադրություն դարձնեն այս խնդիրներին, շտկեն տեխնիկական խոչընդոտները եւ ապահովեն քաղաքացիների համար ավելի հեշտ, հասկանալի ու հարմարավետ համակարգ, ինչը կկանխի հերթերի գոյացումը եւ կբարելավի տրանսպորտային ծառայությունների որակը:

**ՄԵՐԻ ՍԱՀԱԿՅԱՆ**
**3-րդ կուրսի ուսանող**

# Մյունխեն գնալիս հիշենք Բաքվի բանտում մեր ռազմագերիներին

⇨1 ՌԴ-ին հրավեր չի ուղարկվել, դրանից զրկվել են նաեւ ԳԴՀ-ում «Այլընտրանք Գերմանիայի համար»(AfD), «Զառա Վագենքնեխթ դաշինք» (BSW) կուսակցությունները, քանի որ 2024-ին լքել են Բունդեսթագի նիստերի դահլիճը` Զելենսկու ելույթի ժամանակ: Համաժողովի ավարտին Հոյսգենը հրաժեշտ կտա, նախագահի պաշտոնը կստանձնի Յենս Ստոլտենբերգը: Դեռ հայտնի չէ համաժողովի ծրագիրը, սակայն Իսրայելի օրինակը (տե՛ս «Ազգի» 2024-ի փետրվարի 22-ի մեր հրապարակումը) հուշում է, որ Բաքվի բանտում հայ ռազմագերիների լուսանկարները, Ադրբեջանի դպրոցի մի դասագիրք պիտի ցույց տալ համաժողովում, որ պարզ դառնա, թե ֆաշիստ Ալիեւին հարթակ տրամադրելը ինքնավարկաբեկում է:

**ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ**
**Գերմանիա**

Արծվի ԲԱԽՉԻՆՅԱՆ

# Արջուն Կրիշնա Լալ.
# Անվերջ բացահայտելով Հայաստանի շերտերը

*ԵՐԵՎԱՆ-ԹՐԻՎԱՆԴՐՈՒՄ, Հնդկաստան-Հայաստանում եւ Հնդկաստանում բնակվող* ***Արջուն Կրիշնա Լալը*** *գրող է, ձեռնարկատեր եւ ԱՄՆ-ի շուկային սպասարկող «Բիզնեսը բիզնեսի համար» ոլորտի ղեկավար: Նախադպրոցական տարիքից մինչեւ ավագ դպրոց ապրել եւ ուսանել է ԱՄՆ-ում, հետագայում ուսումը շարունակել Հնդկաստանում՝ մասնագիտանալով լրագրության, հոգեբանության եւ անգլերենի մեջ: Արջունը Լոս Անջելեսի «Ֆլայինգ ֆիֆթ գրուպ» թվային մարքեթինգի գործակալության բովանդակության մասնագետն է, նաեւ համահիմնադիրներից Նյու Ջերսիի «Քրիեյթ-Օն»-ի, որը արհեստական բանականության բովանդակության ստեղծման հեղաշրջող սթարթափ է: 2014-ին լույս է տեսել Արջունի առաջին՝ «Չար խաղեր» անգլերեն վեպը: 2024-ին Երեւանում հրատարակվեց նրա «Սեր, կյանք, գինի» գիրքը հայերեն (թարգմանիչ՝* ***Ռոզա Գրիգորյան****): Արջուն Կ. Լալը շարունակում է ակտիվորեն աշխատակցել մի քանի ամսագրերի եւ մասնագիտացված տեխնոլոգիական կայքերի ամբողջ աշխարհում:*

**-Արջո՛ւն, չնայած քեզ հաճախ են հրավիրում հայկական հեռուստաշոուների, ցանկանում եմ քեզ ներկայացնել ավելի լայն լսարանի: Այս ցանկությունն ունեցա քո անսովոր գիրքը կարդալուց հետո: Թեեւ մեծ թվով ոչ հայեր գրել են Հայաստանի ու հայ ժողովրդի մասին, դու առաջիններից մեկն ես, որին գրավել է մերօրյա Հայաստանը: Ինչպես գրել ես. «Ես ուզում եմ գրել այս անհավանական վայրի մասին, որը ես անվանում եմ տուն, եւ այն մարդկանց մասին, որոնք դարձել են իմ ընտանիքը», եւ ապա՝ «Կրկին պետք է ասեմ. կյանքը Երեւանում երբեք անհետաքրքիր չէ»: Դեռ այդպե՞ս ես զգում:**



-Երեք տարի Երեւանում ապրելուց հետո կարող եմ ասել, որ այդպես եմ զգում մինչ օրս: Պատկանելության եւ համայնքի զգացումն այն է, ինչը ես միշտ ցանկացել եմ ունենալ: Թեեւ ծնվել եմ Հնդկաստանում, մեկ տարեկանում ընտանիքիս հետ տեղափոխվել եմ Սեդար Ռափիդս, Այովա: Այնտեղ ապրեցի մինչեւ միջնակարգ դպրոցը, որից հետո վերադարձանք Հնդկաստան: Երկու երկրներում էլ պայքարում էի անհամապատասխանության զգացողության դեմ: Հայ ընկերներիս եւ ծանոթներիս հետ զրույցներից հասկացա, որ ես ունեցել եմ նույն փորձառություններն ու դժվարությունները, որոնց բախվել են առաջին սերնդի հայ ներգաղթյալները ԱՄՆ-ում: Հնդկաստան վերադառնալով՝ վիճակը մոտավորապես նույնն էր, բայց հակառակ կողմից. շրջապատի համար ես երբեք տիպիկ հնդիկ չեմ եղել եւ դժվարությամբ եմ ընկերներ ձեռք բերել:

Նստելով Երեւան տանող առաջին ինքնաթիռը՝ համակվեցի սարսափով, բայց, միեւնույն է, ուզում էի փորձել: Եվ ինձ համար անսպասելի էր իմ հանդեպ ցուցաբերված հյուրասիրությանը (*հայերեն*) եւ ջերմությանը. ես կյանքից ճիշտ հակառակն էի սպասում: Հայաստանում ընկերներ ձեռք բերեցի: Ունեցա անհավատալիորեն շատ արկածներ: Ինձ որդու պես ընդունեց իմ լավագույն ընկերոջ ընտանիքը. անցած ապրիլին ծնողներս եկան Երեւան՝ մասնակցելու ընկերոջս քրոջ հարսանիքին: Ես սիրահարվեցի մեկի, բայց նաեւ՝ մեծ թվով մարդկանց: Քանզի ես շատ բան իմացա պատմության ընթացքում հայերի մղած պայքարի եւ այն մասին, որ նրանք մինչ օրս շարունակում են դիմակայել: Սկսեցի ավելի արժեւորել այն սերն ու ընդունելությունը, որին արժանանում եմ Երեւանում. ցավ տեսած վայրում ավելի հեշտ կլիներ օտարին անվստահ հեռավորության վրա պահել, նրան ատել կամ նրանից վախենալ, բայց նման բան իմ հանդեպ երբեք չի եղել: Այս ամենը շոշափելի ազդեցություն ունեցավ իմ կյանքի եւ իմ ինքնության, ինքս ինձ ընկալելու վրա: Այս պահին իմ ընկերների ու մտերիմների մեծամասնությունը հայեր են: Բովանդակային մարքեթինգի իմ բիզնեսը տեղափոխել եմ Հայաստան եւ հպարտ եմ՝ աշխատելով հայերի հետ եւ ստեղծելով հնարավորություններ տեղացիների համար: Հիմա մեկ ամսով Հնդկաստանում եմ, այցի եմ եկել ընտանիքիս, եւ ինձ զարմացրեց, որ նույնիսկ այստեղ հայերենն է այն լեզուն, որն ամենից շատ եմ օգտագործում ամեն օր՝ աշխատելիս, ընկերներիս հետ զրուցելիս կամ հայերեն հումորային տեսանյութեր դիտելիս:

**-Իսկ դեռ ճշմարի՞տ է քո հետեւյալ հայտարարությունը. «Ինչքա՜ն բազմաշերտ է Երեւանը: Եվ ամեն օր ես նորից բացահայտում եմ այս վայրը: Անհավանական է»: Եվ սա հուշո՞ւմ է, որ միգուցե եւս մեկ գիրք գրես Հայաստանի մասին:**

-Առաջին հայացքից Երեւանը չի ներկայանում որպես աշխարհի ամենաաշխույժ կամ բազմազան վայրը, ինչը շատ լավ է. նախատեսված չէ, որ այդպես պիտի լինի: Որպես մեկը, որին այդ քաղաքն ընդունել է, խորապես հավատում եմ, որ այն պետք է պահպանի իր այդ բնույթը: Սակայն ինձ զարմացնում է, որ նրա մակերեսի տակ կա ժողովուրդների, խոհանոցների եւ մշակույթների այնպիսի մի խորություն, որը սպասում է բացահայտվելուն, եւ դու, որպես զբոսաշրջիկ կամ կարճաժամկետ այցելու, շատ բան չես տեսնի դրանցից: Օրինակ, մի անգամ պատահաբար «բախվեցի» Արեւմտյան Աֆրիկայի սննդի առաքման ծառայության հետ կամ մի խումբ իրանցիների համար հանդես եկա որպես ոչ պաշտոնական զբոսավար, եւ կամ Ամանորն անցկացրի ռուս ընկերների հետ, կամ էլ առաջին անգամ յոգա սովորելու սյուրռեալիստական փորձառություն ունեցա Հնդկաստանում սովորած լիբանանահայ մարզիչի հետ: Երեւանը շարունակում է քեզ «պարգեւատրել»: Այստեղ կա բազմազանություն, բայց կա նաեւ մի բան, որը բնութագիր եւ համ ու հոտ է տալիս քաղաքի հիմնարար ինքնությանը՝ առանց այն փոխելու: Ինչ վերաբերում է մեկ այլ գիրք գրելուն, դա լավ հարց է: Միանշանակորեն՝ դա մի գաղափար է, որի շուրջ մտածում եմ: «Կյանք, սեր, գինին» շատ հում է, որը գրեցի տարբեր փորձառություններ ունենալով: Կցանկանայի մի օր վերանայել այդ թեմաները, բայց ավելի իմաստավորված:

**-Արջո՛ւն, ես ամբողջ սրտով համաձայն եմ քո այս մտքին. «Կյանքում ամենաշատը ես սիրում եմ ձեռք բերել փորձառություն, հիշողություններ եւ մարդկանց»: Հուսով եմ, որ կշարունակես ձեռք բերել ավելի շատ փորձառություն, հիշողություններ ու կապեր եւ նորից ու նորից կբացահայտես Հայաստանի շերտերը:**

-Շնորհակալությո՛ւն (*հայերեն*), ես հենց դա էլ մտադիր եմ անել...

# Արհեստական բանականության ազդեցությունը ընթերցանության մշակույթի վրա

Հերթական օրն էր, երբ համալսարանից դուրս գալուց հետո գնացի գրադարան (մի փոքր ժամանակ ունենալու դեպքում միշտ առիթը բաց չեմ թողնում մի բան կարդալու): Ինչ-որ բան կարծես ուրիշ լիներ: Նայեցի կողքերս, բայց ամեն ինչ նույնն էր: Մազերը միշտ բարձր հավաքած, ուղղանկյունաձեւ ակնոցով ու մուգ շրթներկով կինը էլի նույն տեղում ու նույն դիրքով նստած էր, շարունակում էր անշտապ ու ջղային հայացքով սպասարկել ուսանողներին: Անգամ սպասասրահի գրապահարանի գրքերն իրենց տեղերը չէին փոխել, բայց մի բան ուրիշ էր անցուդարձ չկար: Եթե նախկինում ուսանողների հոսքը թույլ չէր տալիս անգամ աշխատակցուհու սեղանին հասնել, ապա հիմա «ճանապարհն» այնքան ազատ էր, որ զարմանալի էր այդ դատարկությունը:

Փորձեցի մտածել այդ «դատարկության» հնարավոր պատճառների մասին: Եկա այն եզրահանգմանը, որ մեծամասամբ «մեղավորը» նորաստեղծ արհեստական բանականությունը կարող է լինել: Ընթերցանությունը դարեր շարունակ եղել է մարդկային զարգացման հիմնական աղբյուրներից մեկը՝ նպաստելով գիտելիքի փոխանցմանը, հուզական ինտելեկտի ձեւավորմանը եւ աշխարհայացքի ընդլայնմանը: Սակայն թվային դարաշրջանի եւ այդ նույն՝ արհեստական ինտելեկտի զարգացումը կարծես փոխել է ընթերցանության ավանդական մշակույթը: Արհեստական բանականությունը հիանալիորեն առաջարկում է նորարար լուծումներ՝ վիրտուալ գրադարաններից մինչեւ գրքերի բովանդակության վերլուծություն եւ նույնիսկ անհատականացված ընթերցանության առաջարկներ: Սակայն երբեւէ մտածե՞լ եք՝ արդյոք այս փոփոխությունները նպաստո՞ւմ են ընթերցանության հանդեպ հետաքրքրության աճին, թե՞ վտանգում դրա խորքային արժեքը՝ կրճատելով փոխհարաբերությունները գրքերի հետ:




Անդրադառնամ դրական եւ բացասական կողմերին: Դրական կողմերից մեկն այն է, որ արհեստական բանականությունը կարող է օգնել գտնել գրքեր՝ հիմնվելով մեր նախասիրությունների կամ ընթերցումների պատմության վրա: Այն նաեւ կարող է հայտնաբերել արժեքավոր բովանդակությամբ գրքեր, որոնք գուցե ավելի քիչ որոնվածներն են: Նաեւ այն կարող է մեզ օգնել իր անհատականացված խորհուրդներով, որոնք եւս հիմնված են մեր ժանրային նախասիրությունների վրա:

Ըստ իս, բացասական կողմերից գլխավորն այն է, որ լինում է մարդու սեփական փորձի եւ զգացմունքների բացակայություն: Գրականությունը հաճախ խորը զգացմունքներ է առաջացնում, ինչը դժվարությամբ կփոխանցվի նորագույն տեխնոլոգիաների միջոցով: Հիմնվելով արհեստական բանականության վրա՝ սկսում ենք նաեւ կորցնել մեր անձնական հիշողությունները կամ այն մասնագիտական ճանաչումը, որը մեզ տանում է ավելի խորը մտածելու եւ վերլուծելու: Ի վերջո լինում է նաեւ արտադրողականության եւ մշակույթի խանգարում:

Այսպիսով, արհեստական ինտելեկտը ընթերցանության մշակույթին նոր հնարավորություններ է առաջարկում, սակայն մեզ՝ որպես ընթերցողներ, կարեւոր է հասկանալ, որ տեխնոլոգիաները պետք է օգտագործվեն որպես լրացում, այլ ոչ թե փոխարինող: Մենք պետք է շարունակենք գնահատել ու խորացնել մեր կապը գրքերի հետ՝ զգալու դրանց ազդեցությունը եւ ստանալու այն ոգեշնչումը, որը միայն իսկական ընթերցանությունը կարող է տալ: Իսկ գրադարաններն էլ, հուսանք, երբեք ընթերցողի պակաս չեն ունենա:

**ԷԼԵՆ ՄԻՐԶՈՅԱՆ**
**ՀՊՄՀ հեռուստալրագրության**
**3-րդ կուրսի ուսանող**

Դոկտ. ԼՈՔՄԱՆ ՌԱԴՊԵՅ

# Թուրքիան Միջին Արեւելքից «այն կողմ», Արեւելք-Արեւմուտք վերադասավորման արանքում



***Dr. Loqman Radpay-ը «Middle East Forum»-ի աշխատակիցներից է եւ «Դեպի Անկախ Քուրդիստան: Ինքնորոշման խնդիրը Միջազգային իրավունքում» վերնագրով գրքի (հրատարակված 2023-ին Ռուտլեջ հրատարակչատան կողմից) հեղինակ: Բազմաթիվ հոդվածներով հանդես է եկել միջազգային մամուլում (ABS News, Times of Israel, Die Zeit, The Jerusalem Post, եւայլն):***

Վերջին տարիների Թուրքիայի նախաձեռնած արտաքին քաղաքականության համարձակ քայլերը արտացոլում են նրա վճռական ջանքերը վերստանձնելու իր երբեմնի տարածաշրջանային եւ գլոբալ դերը: Սկսած Սիրիա կատարած ռազմական ներխուժումից մինչեւ իր խորացող ընդգրկվածությունը ԲՐԻՔՍ-ին, Անկարայի գործողությունները վկայում են շատ ավելի ծավալուն եւ հեռագնա մարտավարության մասին: Էրդողանի «փառասիրությունը» մարտահրավեր է՝ նետված միջազգային առկա կարգուկանոնի առջեւ:

Թուրքիայի ներգրավվածությունը Սիրիայում շեշտադրում է նրա նվաճողական մոտեցումը ընդհանրապես ամբողջ Միջին Արեւելքի նկատմամբ: Գործնականորեն պաշտպանելով ջիհադիստներին եւ ահաբեկչական խմբավորումներին, Անկարան իրեն է վերապահել գլխավոր դերակատարությունը Սուննի-Շիա հակամարտության պայքարում: Այս մարտավարությունը համահունչ է նախագահ **Ռեջեփ Թայիփ Էրդողանի** նեո-օսմանյան ազդեցության ոլորտի վերականգնման տեսլականի հետ, որտեղ Թուրքիան առաջնորդող դերակատարություն է ստանձնում Սուննի մահմեդականության աշխարհում:

Շեղվելով պետականություն կառուցելու ավանդական ձեւից, Թուրքիայի աշխարհաքաղաքական ընկալումները կենտրոնանում են գլխավորապես ներխուժման եւ ազդեցության ոլորտի ընդլայնման վրա: Եվ դա սոսկ անմիջական անվտանգության մտահոգությունները փարատելու համար չէ, այլ նպատակ ունի ձեւավորելու տարածաշրջանային մի նոր կարգավիճակ, որտեղ ակնառու կդառնան Թուրքիայի պատմական եւ գաղափարախոսական վաղեմի նպատակները:

Թուրքիայի գործողությունները Սիրիայում եւ Իրաքում նաեւ ազդարարում են առավել լուրջ տեղաշարժ արեւմտյան դաշնակցային կախվածությունից: Էրդողանի կառավարությունը սերտ կապեր է հաստատել Ռուսաստանի հետ՝ մարտահրավեր նետելով ՆԱՏՕ-ի համախմբվածությանն ու Անդր-Ատլանտյան շահերին: Որպես օրինակ բերենք Ռուսաստանից S-400 օդային պաշտպանության համակարգի ձեռք բերումը, որը ՆԱՏՕ-ի դաշնակիցների մոտ անվտանգության մտահոգություններ է առաջ բերել՝ մասնավորապես Թուրքիայում տեղակայված ամերիկյան հենակետերում լրտեսություն կատարելու հնարավորության վերաբերյալ:

Չնայած Թուրքիան զենք մատակարարում է Ուկրաինային, Էրդողանի ջանքերը շրջանցելու Ռուսաստանի դեմ կիրառված ամերիկյան պատժամիջոցները ցույց են տալիս Անկարայի հաշվարկված, մանրամասնորեն կշռադատված քաղաքականությունը: Ռուսական խաղաքարտը օգտագործելու այս պատմական մարտավարությունը նպատակ ունի պահպանել տնտեսական կապերը Մոսկվայի հետ, բայց միաժամանակ վարել անկախ դերակատարություն առավել գլոբալ հարցերում:

Թուրքիայի շահագրգռվածությունը մասնակցելու ԲՐԻՔՍ-ին արտահայտում է նրա ձգտումները ընդդիմանալու արեւմտյան գերակայությանը: Էրդողանը այս մարտավարությունը բնութագրել է որպես գլոբալ տնտեսական համակարգում «մոտեցումների, ինքնությունների հաստատման եւ քաղաքականության դիվերսիֆիկացիա»: Բայց նրա այս հռետորական բացատրությունը ավելի խոր մարտավարական նպատակ է հետապնդում՝ բարձրացնել եւ առավելագույնի հասցնել Թուրքիայի հեղինակությունը եւ աշխարհաքաղաքական դերակատարությունը՝ հաշվի առնելով նրա դիրքային առանձնահատկությունը Արեւելք-Արեւմուտք բեւեռների միջեւ ծավալված պայքարում: Նրա քայլը նաեւ վերադարձ է դեպի նախկին կայսերական իսլամական կանոնակարգ:

ԲՐԻՔՍ-ի որոշ անդամներ հետամուտ են ստեղծելու «քաղաքակրթական մի պետություն», որը լիբերալ, ժողովրդավարական նորմերի փոխարեն ինքնիշխանությունն ու մշակութային բազմազանությունն է գերնպատակ հայտարարում: Այս մոտեցումը համահունչ է Էրդողանի նեո-օսմանյան տեսլականի հետ, որը ներառում է թուրքական անցյալի գաղութային յուրահատկությունները: Շվեդիայի եւ Ֆինլանդիայի ՆԱՏՕ-ի անդամակցությանը ձգտող կնճռոտ բանակցություններում Թուրքիան գերազանց կերպով կարողացավ իր աշխարհագրական դիրքից իրեն դրսեւորելով որպես «դարպասապահ» եւ զիջումներ կորզելով ինչպես արեւմտյան, այնպես էլ ոչ-արեւմտյան պետություններից:

Թուրքիայի արտաքին քաղաքականության «ախորժակը» աշխարհաքաղաքական հարցերով չի սահմանափակվում: Այն ընդարձակվում է դեպի գաղափարախոսական ոլորտը: Էրդողանի կառավարությունը սերտ կապեր է հաստատել քաղաքական իսլամիստ խմբավորումների հետ, ինչպիսիք են Համասը, Մուսուլման եղբայրները, եւայլն, որոնք Թուրքիայի «ներդրումների» արդյունքում ձեւավորում են քաղաքական իսլամիզմի ապագան ամբողջ Միջին Արեւելքում ու Եվրոպայում: Երկրում կազմակերպված համագումարներին հրավիրելով **Խալեդ Մաշալի** նման Համասի առաջնորդներին, որոնք վերջերս կոչ արեցին Իսրայելի դեմ օգտագործել նաեւ ինքնազոհության պատրաստ ծայրահեղական ֆանատներին, ապացուցում է Անկարայի գաղափարախոսական պարտավորվածությունները: Ավելին, Քաթարի հետ Թուրքիայի իսլամական խմբակցություններին ֆինանսավորելու կամ հովանավորելու մտադրությունը խոսում է սուննի մահմեդական համայնքների գլոբալ, համագործակցված մարտավարության մասին, հատկապես տարածաշրջանում Իրանի ազդեցության թուլացումից հետո:

Թուրքիայի արտաքին քաղաքականությունը հաստատում է բազմաբեւեռ աշխարհաքաղաքական կարգուկանոնի բարդությունները: Երկակի մոտեցում ցուցաբերելով Թուրքիան մի կողմից ՆԱՏՕ-ին մեղադրում է Ուկրաինայում պատերազմը «սնուցանելու» մեջ, մյուս կողմից իր անդամակցության լծակներով ամրապնդում է իր մարտավարական դիրքը այդ կառույցում: Թուրքիայի ընդարձակման փառասիրությունները իրականում բարդ մարտահրավերներ են՝ նետված Մ. Նահանգներում քաղաքականություն մշակողների առջեւ: ՆԱՏՕ-ի կառույցում կարեւոր դաշնակից հանդիսանալով՝ Թուրքիան շրջադարձ է կատարում դեպի Ռուսաստան, ԲՐԻՔՍ եւ քաղաքական մահմեդականություն, ինչը հյուսիսատլանտյան կազմակերպության սկզբունքներին եւ դավանած արժեքներին դեմ է եւ վարկաբեկում է նրա հեղինակությունը:

Բայց Թուրքիան շարունակում է առաջ տանել իր դերը, որպես անկախ «ուժային բրոկեր», որը կապ չունի որեւէ ավանդական դաշնության կամ սահմանված նորմերի հետ: Սա դժվարին հարցեր է առաջացնում, թե ինչպես վարվել այդ՝ գնալով ավելի համարձակ, պնդերես եւ անկանխատեսելի պետության հետ:

Միջին Արեւելքում Թուրքիայի նկրտումները կարող են է՛լ ավելի սրել գոյություն ունեցող լարվածությունը: Իսկ սուննի մահմեդականության առաջնորդ լինելու հանգամանքը հաստատ կխորացնի աղանդավորական տարակարծությունները, է՛լ ավելի ապակայունացնելով տարածաշրջանը: Թուրքիայի գաղափարախոսական «ընդարձակումները» կարող են նաեւ ծայրահեղականությունը խթանել եւ ջլատել կայունություն եւ ժողովրդավարություն հաստատելու ջանքերը: Ներխուժման մարտավարությանը նաեւ գաղափարախոսական հանդերձավորում հաղորդելով, Անկարան վերաձեւավորում է տարածաշրջանի աշխարհաքաղաքական բնապատկերը, եւ անցնում «դրանից այն կողմ», ինչպես Էրդողանն է ասում:

Թուրքիայի կերպարանափոխությունները կշռադատված պատասխան են ակնկալում, եւ միջազգային հանրությունը պարտավոր է լրջորեն քննարկել հետեւանքները: Արեւմուտքն ու նրա դաշնակիցները Թուրքիայի հետ առնչվելիս պետք է նրբագույն տարբերակիչ մոտեցում ցուցաբերեն, որպեսզի համագործակցությամբ կշռադատված մարտավարություն կիրառեն՝ դիմակայելու համար Անկարայի արտաքին քաղաքականության հարաճուն մարտահրավերներն ու դրանց հաջորդող բազմաբեւեռ աշխարհի խնդիրները:

Անգլ. բնագրից թարգմանեց՝
ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ
(The Armenian Mirror-Spectator)







Ազգ Զարթօնք




Հրավիրում ենք ձեզ մասնակցելու

**Մեթր Գասպար Տէրտէրեանի**

***Մեր Հողային Պահանջատիրութիւնը Միջազգային Հանրային Իրաւունքին Մէջ***

**Գրքին Գ. Տպագրութեան ներկայացման հանդիպմանն**

Հեղինակին ու Գիրքին մասին կը խօսի՝

**ԿԱՐՈ ՎԱՐԴԱՆՅԱՆ**
**(գրող, գրականագետ)**

Հանդիպումը տեղի կունենա շաբաթ, փետրվարի 8-ին, ժամը 14:00-ին, Թեքեյան Կենտրոնի «Հայկաշեն և Մարի Ուզունյան» գրադարանում:
(հասցեն՝ Երևան, Խանջյան 50)

ՍՈՒՐԵՆ Ա
ՍԱՐԳՍՅԱՆ

Միջազգայնագետ, ԱՄՆ արտաքին քաղաքականության փորձագետ

# Դիտարկումներ հայ-ամերիկյան ռազմավարական գործընկերության վերաբերյալ



Հունվարի 14-ին Մ. Նահանգները պաշտոնապես ռազմավարական գործընկերության մակարդակի բարձրացրեց իր հարաբերությունները Հայաստանի հետ: «Մենք (այսօր) հիմնադրում ենք ամերիկա-հայկական մեր ռազմավարական գործընկերության կոմիտեն», հայտարարեց Մ. Նահանգների արդեն պաշտոնաթող պետքարտուղար **Էնթոնի Բլինքենը** նախքան իր պաշտոնակից ՀՀ արտգործնախարար **Արարատ Միրզոյանի** հետ կկնքեր կոմիտեի ստեղծման կանոնադրությունը: Փաստաթուղթը ստորագրվեց նորընտիր նախագահ **Դոնալդ Թրամփի** պաշտոնակալումից ընդամենը մի քանի օր առաջ՝ ավետելով հայ-ամերիկյան հարաբերությունների բնագավառում Բայդենի հեռացող վարչակազմի ժամանակ ուղենշային մի նոր հարթակի գոյության մասին: Այժմ պարզենք այս գործընկերության կանոնադրության բնույթն ու կիրառման սցենարները:

Նախ հստակեցնենք տարբերությունը «ռազմավարական գործընկեր» (strategic partner) եւ «ռազմավարական դաշնակից» (strategic ally) ձեւակերպումների միջեւ: Հայաստանն ու Մ. Նահանգները ռազմական դաշնակիցներ չեն: Այս փաստաթղթով Հայաստանին շնորհված կարգավիճակը պետք է դիտարկել համապատասխան զգուշավորությամբ, հաշվի առնելով, որ այն ստորագրվել է նորընտիր նախագահ Թրամփի միջակա վարչակազմի հետ համաձայնեցնելուց հետո: Սա նշանակում է, որ այն ներկառավարական փաստաթուղթ է, եւ ոչ թե սոսկ **Բայդենի** վարչակազմի հետ կնքված մի պայմանագիր: Այդ պատճառով էլ չպետք է դիտարկվի որպես Բայդեն-Փաշինյան վարչակազմերի նվաճում: Եթե այդպես ներկայացվի, ապա Թրամփի վարչակազմը շատ հանգիստ կարող է արձագանքել ասելով. «Դե, գնացեք եւ այն գործադրեք Բայդենի հետ»:

Կանոնադրության ստորագրումը հնարավոր էր դարձել մի քանի գործոնների, ներառյալ 1990-ականներին կատարված սկզբնական աշխատանքների շնորհիվ, որոնց ընթացքում Հայաստանը բազմաթիվ համաձայնություններ ստորագրեց Մ. Նահանգների հետ: Ապա առաջին նախագահ **Լեւոն Տեր-Պետրոսյանի** 1994 թ. ԱՄՆ այցելության ժամանակ հուշագիր ստորագրվեց **Վազգեն Սարգսյանի** եւ ԱՄՆ պաշտպանության նախարար **Ուիլյամ Պերրիի** միջեւ: Հայաստանի ակտիվ դերակատարությունը պայքարելու ընդդեմ միջազգային ահաբեկչության եւ նրա մասնակցությունը խաղաղապահպանման առաքելություններին (2000-ական թվականներին, նախագահ **Քոչարյանի** պաշտոնավարության ժամանակ) ուշադրության էր արժանացել ՀՀ Ազգային ժողովում ելույթ ունեցող պաշտպանության նախարար **Սերժ Սարգսյանի** կողմից: Հետագայում Հայաստանը խորացրեց իր հարաբերությունները ՆԱՏՕ-ի եւ Մ. Նահանգների հետ 2010-ական թվերին Սերժ Սարգսյանի վարչակազմի օրերին՝ ձեռք բերելով նշանակալի առաջխաղացումներ երկկողմանի հարաբերություններում: Վերնշյալ ստորագրված փաստաթուղթը, այսպիսով, արդյունք է Տեր-Պետրոսյան-Քլինթոն, Քոչարյան-Բուշ եւ Սարգսյան-Օբամա վարչակազմերի համատեղ ջանքերի, որն իր բարձրակետին հասավ Փաշինյան-Բայդեն վարչակազմերի օրոք:

Կարեւոր է նաեւ պարզաբանել, որ «ռազմավարական գործընկերությունը» (strategic partnership) տարբեր է «ռազմավարական (ընդհանրական) միությունից» (strategic alliance), որ առկա է Մ. Նահանգների եւ Իսրայելի կամ Մ. Թագավորության հետ: Մ. Նահանգները Հայաստանին չի տալու ո՛չ անվտանգության երաշխիքներ, ո՛չ ռազմական օժանդակություն, ո՛չ էլ զինամթերք: Ձեռք բերված կարգադրությունը չի նախատեսում ամերիկյան զինվորական հենակետեր հաստատել կամ զինվորական անձնակազմեր տեղակայել Հայաստանում: Անվտանգության ապահովությունը նախատեսում է տրամադրել խորհրդատվական ծրագրեր, զորավարժությունների մասնակցություն եւ ռազմական հմտությունների ձեւավորում «Զինվորական կրթության եւ պատրաստման միջազգային ծրագրի» եւ «Կանզասի ազգային գվարդիայի» հետ գործընկերության շրջանակներում: Այդ բոլորին գումարած՝ հստակացվելու է ֆինանսական եւ տեխնիկական օժանդակություն տնտեսության, բարեփոխումների, մարդու իրավունքների պաշտպանության եւ սոցիալական բնագավառներում ծրագրերի իրականացման համար: Շահագրգռվածություն կա նաեւ Հայաստանում տեղադրելու ամերիկյան փոքր մոդուլային միջուկային ռեակտորներ (SMR): Ինչ վերաբերում է ISIS-ի դեմ պայքարելուն, Հայաստանը պարտավորված է մնում շարունակելու իր մասնակցությունը 9/11-ից հետո ձեւավորված հակաահաբեկչական կոալիցիային եւ իսլամական պետության դեմ ուղղված արշավին: «Kansas National Guard»-ի եւ ՀՀ պաշտպանության նախարարության միջեւ հարաբերությունների սերտացումը հիմնված է 2003-ին ձեռք բերված համագործակցության պայմանագրի վրա:

Հաջորդ հարցը վերաբերում է փաստաթղթի գործադրմանը, որը կախված է նոր ձեւավորվող վարչակազմի գործողություններից: Թրամփի թիմը զրոյից է սկսելու ամեն ինչ եւ դեռ այդ կոմիտեի անդամներ նշանակելու: Փաստաթուղթը պահանջում է հետագա զարգացում հիմնված նշված սկզբունքների վրա: Սակայն պարզ է, որ Մ. Նահանգները չի պատրաստվում Հայաստանին առաջարկել անվտանգության երաշխիքներ, զինամթերք կամ ռազմական հանդերձանք: Ամերիկյան զորամիավորումներ չեն տեղակայվելու ՀՀ-ի սահմաններում: Փոխարենը ամերիկացի փորձագետներ գիտելիքներ են փոխանցելու սահմանային անվտանգությունը ամրապնդելու վերաբերյալ:

Անհրաժեշտ է ո՛չ գերագնահատել, ո՛չ էլ թերագնահատել ԱՄՆ-ի կողմից Հայաստանին շնորհված կարգավիճակը, քանի որ այն բարեփոխումներ կատարելու ամուր հիմքեր է պարունակում: Հայաստանի իշխանությունները պարտավոր են առավելագույնս օգտվել կարգավիճակի ընձեռած հնարավորություններից: Կարեւոր է հիշել, որ այս կարգավիճակը կարող է վերանայվել եւ անգամ չեղյալ համարվել: Ընդամենը մի քանի ամիս առաջ անցկացված ընտրությունների հետեւանքով Վրաստանը կորցրեց իր գործընկերության կարգավիճակը: Անկախ ամեն ինչից, տրված հնարավորությունը անհրաժեշտ է օգտագործել առաջ տանելու համար տնտեսական առաջնահերթությունները:

Անգլ. բնագրից թարգմանեց՝
ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ
(The Armenian Mirror-Spectator)

# Դում-Թրագութ. «Իհարկե շատ կարեւոր է, որ Առաքելոցը սահմանամերձ գյուղում է գտնվում»

⇨1 **- Ապրիլին պարզ կդառնա՝ Առաքելոցը Եվրոպայի 7 ամենավտանգված ժառանգության վայրերի շարքում կլինի՞: Ինչպե՞ս պիտի դա որոշվի:**

- Տարբեր մոտեցումներ կան: Շատ հարցեր նաեւ ինձանից են կախված, որքան լավ եմ բացատրում եւ ներկայացնում հուշարձանախմբի վիճակը, վտանգը, պաշտպանության կարիքը: Պիտի մեդիայի հետ աշխատեմ, տարբեր միջոցառումներ պիտի կազմակերպեմ, դասախոսեմ, այսինքն ինձ համար հիմա՝ մինչ որոշման կայացումը շատ լարված ժամանակ է: Որքան հասկանում եմ, «Եվրոպա նոստրայի» համար հուշարձանի պոտենցյալը կարեւոր է: Իսկ Առաքելոցինը շատ մեծ է: Նախ՝ ահագին մեծ հուշարձանախումբ է, միայն իմ ցանկում 21 հուշարձան կա: Ինձ համար կարեւոր է որ Առաքելոցը ներկայացնեմ, առաջինը՝ որպես սահմանամերձ գյուղի մի շատ կարեւոր մշակութային ժառանգություն եւ, իհարկե, որպես պատմության հին վկայի: Առաքելոցը շատ հետաքրքրական է այն առումով նաեւ, որ յուրօրինակ գյուղ է եղել, խիտ անտառում, գետի մոտ, այն ժամանակին մետաքսի ճանապարհի մի շատ կարեւոր կենտրոն է եղել: Առաքելոցի պատմությունը հետաքրքրական է, վանքն էլ քիչ հետազոտված է: Կարեւոր կլինի նաեւ, որ տարածքի ժողովուրդը հասկանա՝ ի՛նչ գանձեր ունի լքված հին բնակատեղիներում, եւ որ բնակիչներն էլ սովորեն իրենց պատմությունը: Ես արդեն տարիներ է աշխատում եմ Հայաստանի գյուղերում, եւ հաճախ նկատում եմ, որ գյուղացիները քիչ բան գիտեն իրենց պատմական մշակութային հուշարձանների մասին: Չգիտեն, դրա համար լավ չեն պահպանում, կամ ուղղակի մոռանում են: Իսկ Հայաստանում նման մոռացված հուշարձաններ լիքն են, մանավանդ սահմանամերձ գյուղերում: Ես ուզում եմ նաեւ, որ Աճարկուտում եւ տարածքում էկոտուրիզմը զարգանա, ճիշտ կերպով՝ քայլարշավների համար լավ ճանապարհներ սարքենք, գյուղացիների հետ համագործակցենք: Լիքը գաղափարներ ունեմ: Բայց նախ եւ առաջ Առաքելոցը պիտի ընտրվի 7 ամենավտանգվածների մեջ, ինչի հույսն ունեմ:



**-Ուկրաինայի հարուստ մշակութային ժառանգությունը «Եվրոպա Նոստրան» համարում է Եվրոպայում ամենավտանգվածը: Տեղյա՞կ եք Արցախի մշակութային ժառանգության ոչնչացման մասին, որեւէ կերպ արձագանքե՞լ եք:**

- Եվրոպայում շատ քիչ գիտեն հայկական մշակութային ժառանգության մասին, կամ միայն ամենանշանավորները գիտեն: Սա է նաեւ իմ նպատակներից մեկը՝ հիմա, երբ Առաքելոցն արդեն կարճ ցանկում է, 14 ամենավտանգված հուշարձաններից է, Եվրոպայում արդեն ավելի ուշադիր հայացք ունեն: Բայց անկեղծ ասած, Հայաստանում էլ քանի՞սը գիտեն Առաքելոցի, բնակավայրի, այդ տարածքի պատմության մասին: Իսկ ինչ է վերաբերում է Արցախի ժառանգությանը, այո, քիչ գիտեն: Արցախը եվրոպացու համար շատ հեռու է, կապ չունի Արցախի, նրա պատմության, ժառանգության հետ: Նախ պիտի տեղյակ լինեն, որ հասկանան: Ես՝ հայագետս պիտի ամեն ինչ անեմ, որ Ավստրիայում, գերմանախոս երկրներում եւ ամբողջ Եվրոպայում իմանան եւ հասկանան, թե ի՞նչ է նշանակում հայ մշակութային ժառանգություն: Առաքելոցն ինձ եւ բոլորին հրաշալի հնարավորություն կտա, եթե ապրիլին շահի:

Հարցազրույցը վարեց
ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆԸ
Գերմանիա

# Ինչպես են լրատվամիջոցները ձեւավորում հանրային կարծիքը ժամանակակից աշխարհում

Ժամանակակից աշխարհում լրատվամիջոցները դարձել են հանրային կարծիքի ձեւավորման հզոր գործիք: Հաճախ կարող ենք նկատել, թե ինչպես է մեդիան ոչ միայն փոխանցում տեղեկատվություն, այլեւ ուղղորդում այն՝ ազդելով հասարակության կարծիքի եւ որոշումների վրա: Ակնհայտ է, որ լրատվամիջոցները հաճախ ավելի մեծ ազդեցություն են ունենում, քան թվում է առաջին հայացքից:







Լրատվամիջոցների ազդեցությունը հանրային կարծիքի վրա ձեւավորվում է մի շարք մեխանիզմների միջոցով: Առաջինը՝ օրակարգ սահմանելն է: Երբ լրատվամիջոցները մշտապես կենտրոնանում են որեւէ խնդրի վրա, նրանք սահմանում են, թե ինչի մասին պետք է մտածի հասարակությունը: Օրինակ, հայկական լրատվամիջոցները երկար ժամանակ քննարկում էին գազի գների բարձրացման հարցը: Հասարակության ուշադրությունը կենտրոնացավ այդ թեմայի վրա, եւ շատերը սկսեցին քննարկել ոչ միայն գազի գները, այլեւ ընդհանուր տնտեսական խնդիրները: Սա հստակ օրինակ է, թե ինչպես են լրատվամիջոցները ձեւավորում հանրային քննարկումների ուղղությունը:

Բացի օրակարգից, կարեւոր դեր ունի փաստերի ներկայացման ձեւը: Նույն իրադարձությունը տարբեր լրատվամիջոցներ կարող են ներկայացնել լրիվ տարբեր տեսակետներից, ինչը առաջացնում է հակասական տարբեր կարծիքներ: Օրինակ, դիտարկելով պատերազմական հաղորդումները՝ կարող ենք փաստել, որ միջազգային լրատվամիջոցները հաճախ հակադիր պատկեր են տալիս նույն իրադարձությունների վերաբերյալ: Մի լրատվամիջոցը կենտրոնանում է խաղաղ բնակչության զոհերի վրա, մինչդեռ մյուսը ներկայացնում է ռազմական հաղթանակները: Այս տարբերությունը ձեւավորում է ոչ միայն փաստերի ընկալումը, այլեւ հասարակության տրամադրությունները:




Հաճախ ենք ականատես լինում, թե ինչպես է սոցիալական մեդիան դարձել լուրերի տարածման գլխավոր աղբյուր: Բայց սոցիալական մեդիան ավելի անհատական մոտեցում է ցուցաբերում: Օրինակ, Facebook-ը կամ Instagram-ը ալգորիթմների միջոցով ցուցադրում են այնպիսի լուր, որը համընկնում է օգտատիրոջ հետաքրքրությունների կամ նախկին դիտումների հետ: Մի անգամ, երբ ես հետաքրքրվում էի բնապահպանական խնդիրներով, իմ էջում սկսեցին հայտնվել նյութեր միայն այդ թեմայով: Սա, մի կողմից լավ հնարավորություն է խորանալու որեւէ թեմայի մեջ, բայց մյուս կողմից՝ հաճախ սահմանափակում է տեղեկացվածության շրջանակը:

Սոցիալական մեդիան նաեւ դարձել է քաղաքացիության հիմնական հարթակներից մեկը: Երբ ուսումնասիրում էի բողոքի մի ակցիա, որը տեղի էր ունենում Երեւանի կենտրոնում, սոցիալական մեդիայում հրապարակված նյութերն ավելի արագ տարածվեցին, քան լրատվամիջոցների հաղորդումները: Սոցիալական մեդիայի միջոցով հաճախ հնարավոր է վայրկյանների ընթացքում մեծաթիվ մարդկանց տեղեկացնել որեւէ իրադարձության մասին, ինչը ավանդական լրատվամիջոցների ձեւերի համար դժվար հասանելի է:

Լրատվամիջոցների ազդեցությունը կարող է դառնալ հզոր գործիք՝ հասարակության ուշադրությունը որեւէ թեմայի կողմ ուղղորդելու համար: Օրինակ, հենց մեդիայի շնորհիվ են շատ հասարակական շարժումներ՝ ինչպես կանանց իրավունքների կամ կլիմայի փոփոխության դեմ պայքարի նախաձեռնությունները, ձեռք բերել համաշխարհային ուշադրություն:

Twitter-ի եւ Instagram-ի նման հարթակները կարեւոր դեր են խաղացել այնպիսի շարժումների հաջողության մեջ, ինչպիսին է Black Lives Matter-ը: Հեշթեգներով, վիրուսային գրառումներով եւ ընդհանուր անձնական պատմություններով սոցիալական ցանցերը թույլ են տվել մարդկանց բողոքի ցույցեր կազմակերպել եւ արդարություն պահանջել:

Սոցիալական ցանցերի ազդեցությունը հասարակական կարծիքի վրա անհերքելի է: Նրանք ի վիճակի են ազդել այն բանի վրա, թե ինչպես են մարդիկ ընկալում քաղաքական իրադարձությունները, սոցիալական խնդիրները, նույնիսկ իրենց առօրյա կյանքը: Թեեւ այն հարթակ է ապահովում ազատ արտահայտման եւ ակտիվության համար, այն նաեւ մտահոգություն է առաջացնում ապատեղեկատվության տարածման տեսակետից: Հետագայում կարեւոր է, որ ինչպես անհատները, այնպես էլ սոցիալական ցանցերում տեղեկատվություն տարածող հարթակները պատասխանատվություն կրեն տարածվող եւ ստարվող տեղեկատվության համար: Հասարակությունը քննադատաբար պետք է գնահատի այն տեղեկատվությունը, որին հանդիպում ենք ինտերնետում: Փոխարենը պետք է խրախուսի պատասխանատու առցանց վարքագիծը՝ ավելի տեղեկացված հասարակության ձեւավորմանը նպաստելու համար:

**ԱԼԼԱ ՂԱԶԱՆՉՅԱՆ**
**ՀՊՄՀ հեռուստալրագրության 3-րդ կուրսի ուսանող**

# Լույս է տեսել

Լույս է տեսել Ռուսաստանի Գ.Վ. Պլեխանովի անվան տնտեսագիտական համալսարանի Երեւանի մասնաճյուղի գիտական հոդվածների հերթական ժողովածուն՝ «Սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրներ»՝ 453 էջ ծավալով:

Ժողովածուն ընդգրկում է Համալսարանի եւ այլ կազմակերպությունների հետազոտողների հոդվածներ: Այն օգտակար կլինի տնտեսագետների, գիտական հետազոտությամբ զբաղվողների, ինչպես նաեւ կառավարման համակարգում աշխատողների համար:

Ժողովածուում ներկայացված են բազմաթիվ գիտական հոդվածներ նվիրված մեր երկրի տնտեսության զարգացման խնդիրներին: Մասնավորապես՝ «Շրջակա միջավայրի վրա հանքարդյունաբերության բացասական ազդեցությունների շուրջ», «Արհեստական բանականության կիրառման հնարավորությունները ՀՀ բարձրագույն կրթության ոլորտում», «Գյուղատնտեսության ապահովագրությունը աշխարհի տարբեր երկրներում եւ հնարավոր տարբերակների կիրառումը ՀՀ-ում» եւ այլն:

Տողերիս հեղինակը հիմնավորել է Վանաձորի ջերմային էլեկտրակայանի վերազինման անհրաժեշտությունը, որի դեպքում հնարավոր է տարեկան արտադրել շուրջ 700 միլիոն ԿՎտժ էլեկտրաէներգիա: Արդյունքում կունենանք նաեւ շրջակա միջավայրի բարելավում եւ վառելիքի տնտեսում:

Հարկ է նշել,որ ժողովածուն երաշխավորվել է հրատարակության Ռուսաստանի Գ.Վ. Պլեխանովի անվան տնտեսագիտական համալսարանի Երեւանի մասնաճյուղի գիտական խորհրդի որոշմամբ: Առաջարկությունների կիրառման դեպքում անտարակույս կունենանք մեր երկրի տնտեսության զգալի աճ:




**ՍՏԵՓԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ**

# Իմաստաբանական բառարան

## *Ինչպես դիմել կանանց*

Իրան այցելող հայ տղամարդի՛կ, խորհուրդ եմ տալիս ավանդապաշտ իրանցի տղամարդկանց հետ հանդիպումներին նրանց կանանց մասին հարցեր չտալ: Նրանք (ավանդապաշտ իրանցի տղամարդիկ) ահավոր չեն սիրում, երբ իրենց կանանցով եք հետաքրքրվում: Եթե, այնուամենայնիվ, շատ եք ցանկանում ձեր ծանոթ իրանցու կնոջ ողջությունն իմանալ, գոնե ասեք՝ ինչպես է ձեր որդու մայրը:

Անցյալում, ինչպես նաեւ այսօր, շատ ավանդապաշտ ընտանիքներում իրանցի տղամարդիկ իրենց կանանց դիմելիս, կամ նրանց մասին խոսելիս, օգտագործում էին ավագագույն որդու անունը: Օրինակ, եթե կնոջ անունը **Ֆաթիմա** է, իսկ ավագ որդունը՝ **Հասան**, ամուսինն իր կնոջը դիմելիս «Հասանի մայր», կամ պարզապես «Հասանի» է անվանում: Ի դեպ, այս ավանդույթն այսօր էլ է տարածված Իրանում:

Աֆղանստանում էլ կանանց իրենց անուններով կոչելը անարգանքի նշան է: Նույնիսկ գերեզմանաքարերի վրա կանանց անունները չեն գրվում: Փոխարենը գրվում են հանգուցյալ կանանց հոր կամ ամուսնու անունները: Երբեմն էլ գերեզմանաքարի վրա փորագրվում է կնոջ ավագ որդու անունը:

Իրանում սեֆեւիների տիրապետության ժամանակ բանակի հրամանատարներին մեծարելու համար «սուլթան» էին անվանում, որի կիրառության մակարդակն աստիճանաբար նվազում էր ու օգտագործվում ավելի ցածրաստիճան զինվորականներին դիմելիս: Հետագայում իրանցիները, ընդօրինակելով օսմանցիներին, սկսեցին իրենց թագավորների կանանց ու քույրերին սուլթան անվանել: Սուլթան բառիմաստի արժեզրկումը շարունակվեց այնքան, որ իրանցիներն սկսեցին աղախիններին ու սպասուհիներին սուլթան անվանել: Իսկ սուլթանի ինչյունափոխված եւ իգականացված «սալիթե» բառն այսօր պարսկերենով նշանակում է զավզակ՝ շատախոս կին:

Եթե տղամարդը ձեր ներկայությամբ իր կնոջ անունը տալու փոխարեն օգտագործում է «*ՈՒՄ ԵՆ ԱՍՈՒՄ*» արտահայտությունը, համոզված եղեք, որ նա իրանական Չհարմահալի հայկական համայնքից է, քանի որ 17-րդ դարի սկզբին **շահ Աբբաս** առաջինի կազմակերպած բռնագաղթի ժամանակ կենտրոնական Իրանի Չհարմահալում բնակեցված ավանդապաշտ հայ տղամարդը խորշում է այլոց ներկայությամբ հոլովել իր կնոջ անունը:

Ուշագրավն այն է, որ մի ժամանակ Հայաստանում նույնպես պարկեշտ ընտանիքներում անվայել էր գործածել «կնիկս» բառը, եւ նրա փոխարեն ասում էին տղոցս մայրը, քույրդ, մեր ընտանիքը: (**Հր. Աճառյան**, «Լիակատար քերականություն հայոց լեզվի»):

Այսօրվա Հայաստանում որոշ ավանդապաշտ հայեր գերադասում են իրենց կնոջ անունը չտալ, ու դրա փոխարեն հազար ու մի հնարքի են դիմում: Օրինակ, ոմանք իրենց կնոջ մասին խոսելիս, անկախ տարիքից, ասում են՝ «պառավս», ոմանք էլ՝ «նշանածս»:

Սեփական կնոջը դիմելիս հայ տղամարդու շուրթերից արտաբերվող «աղջիկ ջան» արտահայտության մեջ մի քիչ վիրավորանք, մի քիչ էլ արհամարհանք կա:

Ավելի ժամանակակից հայերն էլ, նույնիսկ օտարների ներկայությամբ, սեփական կնոջը ծիտիկս, եղնիկս, թռչնակս, ձուկիկս... բառերով են դիմում:

**ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ**

# Կրթությունը փոխակերպվող աշխարհում

Ի՞նչ ենք մենք առաջինը պատկերացնում, երբ փորձում ենք հասկանալ, թե ի՞նչ է կրթությունը: Գիրք ու գրատախտա՞կ, դասարան ու ուսուցչի խիստ հայա՞ցք, թե՞ այն ճանապարհը, որով մենք փորձում ենք տեսնել աշխարհն ու հասկանալ աշխարհը եւ գտնել ինքներս մեզ ու մեր տեղը կյանքում:

Կրթությունը, ինչպես ժամանակը, մշտապես շարժվում է` փոխվելով, ձեւափոխվելով, բայց երբեք կանգ չառնելով: Այսօր մենք ապրում ենք մի աշխարհում, որտեղ տեղեկատվությունն այնքան արագ է հոսում, որ նույնիսկ ամենախելացի ուսուցիչը դժվարությամբ է հասցնում հետեւել դրան: Մենք պատրաստում ենք երեխաներին մի ապագայի համար, որը մենք ինքներս չենք հասկանում: Ահա թե ինչու կրթությունը պետք է լինի ոչ թե պատասխանների հավաքածու, այլ հարցեր տալու արվեստ:

Անցել են այն ժամանակները, երբ ուսուցիչները կավիճով գրատախտակին գրում էին ու ջնջում: Այդ ժամանակ կրթությունը կարծես թղթի վրա գծված ուղի լիներ` միանշանակ, պարզ ու հստակ: Իսկ հիմա՞: Հիմա մենք ունենք էկրաններ, վիրտուալ դասարաններ եւ օնլայն դասընթացներ: Տեխնոլոգիաների ներթափանցումը կրթության ոլորտ կարծես նոր դուռ բացեց` թույլ տալով մարդկանց սովորել աշխարհի ամեն անկյունից: Բայց այս ամենը միայն մեկ կողմն է խնդրի:




Մյուս կողմում, տեխնոլոգիաների հարմարավետության հետեւում, մենք հաճախ կորցնում ենք մարդկային շփումը: Ինչպե՞ս կարող է ուսուցիչը հասկանալ աշակերտի մտքերը, երբ վերջինս նստած է հազարավոր կիլոմետրեր հեռու` էկրանի մյուս կողմում: Ինչպե՞ս կարող է աշակերտը սովորել շփվել իր տարեկիցների հետ, դրսեւորել իրեն սոցիումում, երբ նրա միակ «դասընկերը» արհեստական բանականությունն է:

Կրթությունը միշտ համարվել է դեպի հաջողություն տանող բանալի: Բայց արդյոք մենք գիտե՞նք, թե ինչ դուռ ենք ուզում բացել այդ բանալիով: Հնարավոր է` մեր խնդիրն այն չէ, որ մենք չունենք ճիշտ ուսումնական ծրագրեր, այլ այն, որ մենք չենք ուղղում ճիշտ հարցեր:

Օրինակ`

- Ինչո՞ւ է կրթությունը դեռ կենտրոնացած գնահատականների վրա, երբ կյանքը չի չափվում 60-ով կամ 100-ով:

- Ինչպե՞ս կարող ենք կրթել երեխաներին, երբ մենք ինքներս չենք հասկանում, թե ի՞նչ է նշանակում ապրել արագ փոփոխվող աշխարհում:

- Արդյո՞ք կրթությունը պետք է լինի միայն գիտելիքներ փոխանցելու միջոց, թե՞ այն պետք է օգնի մարդկանց գտնել կյանքի իրենց ուղին:

Մենք հաճախ մոռանում ենք, որ կրթությունը միայն դպրոցում չէ: Այն ամենուր է` մեր տներում, փողոցներում, ընկերների հետ զրույցներում: Կրթությունը միայն գրքերն ու տեսությունները չեն: Դա այն է, ինչ մենք սովորում ենք, երբ սխալվում ենք, երբ հաջողում ենք, երբ լսում ենք ուրիշների պատմությունները: Ինչպես ասում են` «Խելացի մարդիկ սովորում են իրենց սխալներից, ավելի խելացիները` մյուսների»:

Դժվար է նույնիսկ պատկերացնել, թե ինչպիսին է լինելու կրթությունը 50 տարի հետո: Արդյոք մենք դեռ կունենա՞նք դպրոցներ, թե՞ կսովորենք ամբողջովին վիրտուալ աշխարհներում: Արդյո՞ք ուսուցիչները կփոխարինվե՞ն ռոբոտներով, թե՞ նրանք կդառնան ավելի շատ ուղեցույցներ, քան գիտելիքի աղբյուր:

Հնարավոր է , որ ապագայի կրթությունը լինի ավելի անհատականացված: Յուրաքանչյուր երեխա յուրահատուկ է, եւ կրթությունը պետք է հարմարվի նրա կարիքներին: Տեխնոլոգիաները կարող են օգնել այստեղ` առաջարկելով անհատականացված ուսուցման ծրագրեր: Բայց կարեւոր է չմոռանալ, որ տեխնոլոգիան երբեք չի կարող փոխարինել մարդկային շփմանը:

Բացի այդ, ապագայի կրթությունը նույնպես պետք է լինի շարունակական եւ ուղեկցի մեզ ողջ կյանքի ընթացքում, քանի որ կյանքը երբեք չի դադարում մեզ նոր բաներ սովորեցնել: Մենք պետք է սովորենք ոչ միայն դպրոցում կամ համալսարանում, այլեւ աշխատանքի, ընտանիքի եւ առօրյա կյանքի ընթացքում:

Այսպիսով, կրթությունը միայն միջոց չէ: Այն նպատակ է, ճանապարհ, որը պետք է անցնենք բոլորս: Այն ոչ թե պետք է սովորեցնի մեզ ինչ անել, այլ օգնի մեզ հասկանալ, թե ինչու ենք անում այն, ինչ անում ենք:

Ապագայի կրթությունը կախված է մեզնից` մեր համարձակությունից, նորարարությունից եւ պատրաստակամությունից` ընդունելու փոփոխությունները: Եթե մենք կարողանանք գտնել ճիշտ հարցերը, ճիշտ մոտեցումները եւ ճիշտ հավասարակշռությունը, ապա կրթությունը կդառնա ոչ միայն հաջողության բանալի, այլեւ դուռը կբացի դեպի մի աշխարհ, որտեղ բոլորն ունեն հավասար հնարավորություններ սովորելու եւ զարգանալու:

**ԱՐԳԻՇՏԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ**
**ՀՊՄՀ հեռուստալրագրության**
**3-րդ կուրսի ուսանող**

# Էլեկտրաէներգիա. լույս, ուժ եւ ապագա

**ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ**

ՀՀ շարքային քաղաքացու, որը փորձում է երկրի տնտեսության առումով հարցերի շուրջ ակտիվ լրագրությամբ զբաղվել, շրջապատիս ներկայացուցիչներից ոմանք հաճախ են հարցնում, թե երբ ենք մասամբ մարդավայել առօրյայով ապրելու: Այսօրինակ ցանկություն հայտնելով նկատի ունեն, որ բնակարանում հաճելի ջերմաստիճան լինի, շքամուտքն ու բակը` բարեկարգ, տրանսպորտը սպասեցնել չտա, աշխատավայրը տրամադրի, հանգստի ու ժամանցի համար էլ միջոցներ մնան. այս ամենն անշուշտ` սահմաններում խաղաղության պայմաններում: Ինչքան էլ տարօրինակ համարվի, պատասխանս երբեմն գոհացնող չի համարվում, քանզի առարկություն չընդունող տոնով ասում եմ, ասենք` երբ ՀՀ-ում մեկ բնակչի հաշվով էլեկտրաէներգիայի տարեկան արտադրությունը կանցնի 6000 կվտժամը:

Հայաստանաբնակներից շատերն են տարակուսում, թե` ատոմակայան ունենք, դա ի՞նչ հարց է որ: Հենց այստեղ էլ կանգ առնենք եւ դիմենք թվերի օգնությանը: Մեծամորի ատոմակայանի ներկայում գործող ռեակտորի հզորությունը 407 մգվ է, տարեկան միջին էլեկտրաարտադրությունը` 2-2.4 մլրդ կվտժամ, ՀՀ առկա բնակիչներից յուրաքանչյուրի առումով` մոտ 700 կվտժամ: Առաջարկված 6000 կվտժամի համեմատ շատ համեստ ցուցանիշ է ստացվում, հնարավոր ապահովումը` ծանրագույն աշխատանք պահանջող: Թե որտեղից է վերցվել այդ տարօրինակ 6.000 կվտժամ ցուցանիշը, ինչու այն 5000, 4000 կվտժամ չէ, կամ 7000 կվտժամից բարձր թիվ, փորձենք բացահայտել համաշխարհային տարբեր տեղեկատուներից վերցված հիմնականում կառավարությունների ներկայացրած թվերի օգնությամբ:

ՀՀ-ում էլեկտրաէներգիայի տարեկան արտադրության ցուցանիշը 7 մլրդ կիլովատժամի շրջակայքում է գրեթե 20 տարի, առանձին դեպքերում` մի փոքր ավելի կամ պակաս: Տարօրինակ է, որ այս ժամանակահատվածում թե՛ երկրի համախառն ներքին արդյունքը, թե՛ բյուջեն ավելացել են բազմակի անգամներ: Վերջինս, ասենք 500 մլն դոլարից անցել է 5 մլրդ դոլարը, տասնապատկվել է, սակայն արի ու տես, որ ո՛չ տնտեսավարական հանրությունը, ո՛չ էլ իրար փոխարինած գործադիր իշխանությունները երբեւէ չեն անդրադարձել այս խնդրին: Արդյո՞ք, մեղմ ասենք, կարիքը չկա:

Ծանոթանանք Թուրքիայի այսօրինակ ցուցանիշներին, որոնք արձանագրվել են երկրի ազգային արժույթ լիրայի գրեթե աննախադեպ արժեզրկման հետեւանքով` ԱՄՆ-ի դոլարի համեմատ 6-ից 30 եւ ավելի լիրայի հասնելու պարագայում: 2000-ականների սկզբին Թուրքիայում էլեկտրաէներգիայի տարեկան արտադրությունը 110-120 մլրդ կվտժամ էր, մեկ բնակչի հաշվով տարեկան ՀՆԱ-ն` 7000 դոլար: Մեր ժամանակներում արդեն էլեկտրաէներգիայի տարեկան արտադրությունն անցել է 300 մլրդ կվտժամը, ՀՆԱ-ն` ըստ գնողունակության գործակցի, 1 բնակչի հաշվով 30 հազար դոլար է մեր 8000 դոլարի դիմաց: Մեկ բնակչի հաշվով տարեկան 4000 կվտժամ էլեկտրաէներգիայի արտադրություն ունեցող Թուրքիայում կարողանում են չորս հզոր ատոմակայաններ կառուցել, երբ մենք մտորում ենք 400 մգվտ թե՞ 600 մգվտ հզորության էլեկտրակայան կառուցելու շուրջ:

Օրեր առաջ իր հոգսերից խոսեց մեր բնակելի զանգվածի մեկ տասնյակ ընտանիքների կաթնամթերքով ապահովող գեղարքունիքցի անասնապահը. պարզվեց` 4 կովերից հիմա 3-ն է պահում, պատճառը` արոտատեղում արեւային կայան են տեղադրել: Իսկ ահա Արագածոտնի մարզում 13 հեկտար սեփականաշնորհված հող ունեցող ծանոթս էլ նշում է, որ այն չի կարողանում վաճառել, որովհետեւ գնորդը ցանկանում է արեւային կայան կառուցել: Դե եկ ու գլուխ հանիր այսօրինակ միջավայրից:

Հայրենակիցներիցս ոմանք, թերեւս հարգանքի ու հեգնանքի խոսքերի փնտրտուքի տրվեն: Չեմ կարող չխոսել մեր երբեմնի բախտակից, 1.2 մլն բնակչությամբ Էստոնիայից, ուր էլեկտրաէներգիայի տարեկան արտադրությունը մոտենում է 7 մլրդ կվտժամի. գիտենք, որ էլեկտրաէներգիան չի պահեստավորվում, այլ տեղնուտեղը ծախսվում է, մի դեպքում հաստոց է աշխատեցնում, այլ տեղում` հարահոս ու վերելակ, ժամանցի ու հանգստի վայրերում էլ լուսավորություն: Մեկ բնակչի հաշվով 50 հազար դոլարի արդյունք ստեղծող մարդկանց միտքն ու մարմինը այլեւայլ ծառայություններից օգտվելու պահանջ ունի, որն էլ իրացնում է էլեկտրաէներգիայի ընձեռած հնարավորությունների շնորհիվ...

Էստոնիայի հարեւան Ֆինլանդիայում 1 բնակչի հաշվով տարեկան էլեկտրաարտադրությունը հասնում է 13.000 կվտժամի, Նորվեգիայում այս թվի կրկնակից ավելին է, 28.000 կվտժամ: Թե անսովոր ի՞նչ էլեկտրածախս են իրականացնում, նշեմ դրանցից մեկը. ամենամարդաշատ մայթերի տակ էլեկտրաջեռուցման սնուցում են անցկացրել մայթերը չսառելու նպատակով:

Մեր օրերում էլեկտրաէներգիայի օգտագործման նոր ոլորտ է կազմավորվում, որն է` էլեկտրաավտոմեքենաների ի հայտ գալը: Դրանք արդեն հազարներով կան նաեւ Երեւանում, քանզի ՀՀ կառավարությունը էլեկտրամոբիլներ ներմուծողներին որոշակի արտոնություններ է շնորհում: Դրանց մոդելներից մեկը վարող Վարդանից տեղեկացա, որ էլլիցքավորում իրականացնում է 50 կվտ, որը բավարարում է քաղաքում 400 կիլոմետր երթեւեկի համար: Այնպես որ առայժմ դժվար է հաշվել, թե ի՞նչ քանակի էլեկտրաէներգիա կպահանջվի 1-2 տարի անց պարկը ապահովելու նպատակով, հավանաբար` հարյուր միլիոնավոր կիլովատժամեր, որոնց արտադրությամբ հարկ է, որ ՀՀ-ում քայլեր ձեռնարկվեն:

Անակնկալներն այլ ձեւերով կհայտնվեն:

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԼԴ տարի
Հրատարակիչ
**«ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ» սոցիալ-մշակութային հիմնադրամ**
Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001
**e-mail:** info@azg.am
azgdaily@gmail.com
**www.azg.am**
*Գլխաւոր խմբագիր*
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ
*Հաշվապահութիւն (գովազդ)*
հեռ. **010 582960**
*Համակարգչային շարուածքը`*
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN
Phone: 374 010 582960

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ` 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող` «Վահան Թեքեյան» սոցիալ-մշակութային հիմնադրամ», Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001: Պետական գրանցման վկայականի համարը` 286.110.1041780, տրուած` 25.10.2018 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 06.02.2025, գինը` 200 դրամ, տպաքանակը` 800 օրինակ, տպագրւում է «Գինդ» տպարան ՍՊԸ, ք. Երեւան, Բագրատունյաց 70ա: